



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ընդունվել է 23.03.2018

- [ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՑՅԱԼԵՐ](#)
- [ԳԼՈՒԽ 2. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՉԱԱԳՐԵՐԸ \(ԱՇԽԱՏԱՅԵՐԻՆ ԿԱՐԱԳԻՐԸ\) ԵՎ ԱՆՎԱՆԱՑԱՆԿԸ, ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ](#)
- [ԳԼՈՒԽ 3. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼԸ](#)
- [ԳԼՈՒԽ 4. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ](#)
- [ԳԼՈՒԽ 5. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ԱՌՆԱՆՉԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ](#)
- [ԳԼՈՒԽ 6. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՑԻՆ, ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌՆԱՆՉԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ](#)
- [ԳԼՈՒԽ 7. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂԻ ԵԹԻՎԱՅԻ ՀԱՆՉԱԱԺՈՂՈՎՐԸ ԵՎ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉԸ](#)
- [ԳԼՈՒԽ 8. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԴԱՐԱՐՈՒՄԸ, ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻՑ ԱՉԱՏԵԼԸ, ԼԻԱԾՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱՐԱՐԵՑՆԵԼԸ](#)
- [ԳԼՈՒԽ 9. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԴԵՎՎՈՐՄԱՆ ՊԱՏԱՑԱՆԱՏՈՒՆԵՐԸ](#)
- [ԳԼՈՒԽ 10. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՌՆԱՆՉԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԴԵՊՔԵՐՈՒՄ](#)
- [ԳԼՈՒԽ 11. ԵԶՐԱՓՈՎԳԻՉ ՄԱՍ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՑՅԱԼԵՐ](#)

ԳԼՈՒԽ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՑՅԱԼԵՐ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

1. Սույն օրենքով կարգավորվում են Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական ծառայության կազմակերպման, քաղաքացիական ծառայության պաշտոնների դասակարգման, քաղաքացիական ծառայության պաշտոնների համարման, քաղաքացիական ծառայողների կատարողականի գնահատման, վերապատրաստման, քաղաքացիական ծառայողի իրավական վիճակի, պաշտոնից ազատման, ծառայության դադարեցման, ինչպես նաև քաղաքացիական ծառայության որպես պետական ծառայության առանձին տեսակի հետ կապված այլ հարաբերություններ:

Հոդված 2. Օրենքի գործողության շրջանակը

1. Սույն օրենքի գործողությունը տարածվում է օրենսդիր, գործադիր, դատական իշխանության մարմիններում, Հանրապետության նախագահի աշխատակազմում, դատախազությունում, քննչական մարմիններում, անկախ պետական մարմիններում, ինքնավար մարմիններում, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում, ինչպես նաև Կառավարությանը, վարչապետին և նախարարություններին ենթակա պետական մարմիններում (այսուհետ՝ համապատասխան մարմին) քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված պաշտոն զբաղեցնող անձանց վրա:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված մարմիններում պետական ծառայության հարաբերությունները կարգավորվում են սույն օրենքով, եթե այլ օրենքներով առանձինհատկություններ սահմանված չեն:

3. Պետական ծառայության այլ օրենքներով առանձինհատկություններ նախատեսող ծառայություններում (մարմիններում) աջակցող մասնագիտական գործառնություններ իրականացնող ծառայողները քաղաքացիական ծառայողներ են:

Հոդված 3. Քաղաքացիական ծառայության մասին Հայաստանի Հանրապետության իրավական ակտերը

1. Քաղաքացիական ծառայության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, սույն օրենքով, «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Կառավարության, վարչապետի և քաղաքացիական ծառայությունը համակարգող փոխվարչապետի (այսուհետ՝ համակարգող փոխվարչապետ) որոշումներով, ինչպես նաև այլ իրավական ակտերով:

2. Քաղաքացիական ծառայությունը կազմակերպվում է «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածով սահմանված սկզբունքների հիման վրա:

3. Քաղաքացիական ծառայողների հիմնական իրավունքների և պարտականությունների, սցիալական երաշխիքների, բարեվարքության համակարգի և այս իրավակարգավորումներից բխող այլ հարաբերություններ, որոնք պարտադիր են քաղաքացիական ծառայողների համար, կարգավորվում են «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

Քաղաքացիական ծառայության անցնող քաղաքացիների՝ սույն օրենքից բխող իրավունքների իրականացմանն առնչվող պայմանները և կարգերն ընդունում է Կառավարությունը, իսկ ծառայության կազմակերպմանն առանձինհատկությունները սահմանում է համակարգող փոխվարչապետը:

Հոդված 4. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) քաղաքացիական ծառայություն՝ արժանիքահեն, կարիերային առաջընթացով բնութագրվող, քաղաքական չեզոքություն պահանջող մասնագիտական գործունեություն, որը կատարվում է սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասում նշված համապատասխան մարմիններում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ այդ մարմիններին վերապահված լիազորությունների իրականացման նպատակով:

2) քաղաքացիական ծառայության պաշտոն՝ համապատասխան մարմնի իրավասությունը սահմանող իրավական ակտերից և խնդիրներից բխող իրավունքներ ու պարտականություններ, մասնագիտական գիտելիքներ ու կոմպետենցիաներ պահանջող կառավարման համակարգում տեղակայված, քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված հաստիքային միավոր:

3) քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկ՝ սույն օրենքի 5-րդ հոդվածով սահմանված կարգով ձևավորված քաղաքացիական ծառայության բոլոր պաշտոնների ցանկ:

4) քաղաքացիական ծառայող՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի, որ սույն օրենքով սահմանված կարգով զբաղեցնում է քաղաքացիական ծառայության պաշտոն և կատարում է այդ պաշտոնին վերապահված մասնագիտական գործունեություն կամ գրանցված է քաղաքացիական ծառայության կադրերի ռեգիստրում և վարձատրվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից:

5) քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագիր (աշխատատեղի նկարագիր)՝ համապատասխան մարմնի իրավասությունը սահմանող իրավական ակտերից և խնդիրներից բխող քաղաքացիական ծառայողի գործառնությունը, իրավունքներն ու պարտականությունները, շփուժներն ու հաշվետվողականությունը նկարագրող և այդ գործառնությունները արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ մասնագիտական գիտելիքներ ու կոմպետենցիաներ նախատեսող, կառավարման համակարգում տեղակայվածությունը նախատեսող, սույն օրենքով սահմանված կարգով հաստատված փաստաթուղթ:

6) քաղաքացիական ծառայողների վերապատրաստում՝ քաղաքացիական ծառայողների մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների հետևողական և շարունակական կատարելագործում:

7) քաղաքացիական ծառայության կադրերի ռեգիստր՝ ռեեստր, որտեղ սույն օրենքով սահմանված դեպքերում և կարգով գրանցվում են քաղաքացիական ծառայության պաշտոններից ազատված քաղաքացիական ծառայողները:

8) փորձնակ՝ սույն օրենքի 31-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով համապատասխան մարմիններում աշխատանքային փորձ ձեռք բերելու համար գրանցված անձ:

9) բարեվարքության հարցերով կազմակերպիչ՝ անձնակազմի կառավարման ստորաբաժանման քաղաքացիական ծառայող, որի պաշտոնի անձնագրում ամրագրված են քաղաքացիական ծառայողի բարեվարքության պահանջների մասով իրավունքներ և պարտականություններ:

10) կոմպետենցիա՝ գիտելիքների, ունակությունների, հմտությունների և վարքագծի ամբողջություն, որն անհրաժեշտ է պաշտոնի անձնագրով նախատեսված գործառնությունների արդյունավետ իրականացման համար:

11) մասնագիտական գիտելիք՝ տեղեկությունների, հասկացությունների, մտքերի, փաստերի և հանգամանքների ամբողջություն, որն անհրաժեշտ է պաշտոնի անձնագրով նախատեսված գործառնությունների արդյունավետ իրականացման համար:

12) հավասարագոր պաշտոն՝ քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկում քաղաքացիական ծառայության պաշտոնի համապատասխան խմբի նույն ենթախմբում ընդգրկված քաղաքացիական ծառայության պաշտոն:

13) ծառայողական քննություն՝ քաղաքացիական ծառայողի ծառայողական պարտականությունների և (կամ) բարեվարքության և (կամ) նրա գործունեությանն առնչվող և (կամ) աշխատանքային հարաբերությունների հետ կապված հարցերի ուսումնասիրություն:

14) քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակ՝ վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի (այսուհետ՝ քաղաքացիական ծառայության գրասենյակ) կողմից կառավարվող էլեկտրոնային ծրագիր:

1) մասնագիտական աշխատանքային ստաժ՝ ստացած բարձրագույն կրթության, իսկ տվյալ պաշտոնի անձնագրով բարձրագույն մասնագիտական կրթություն նախատեսված լինելու դեպքում այդ կրթության մասին վկայող փաստաթղթում նշված որակավորմանը համապատասխանող աշխատանքային ստաժ, անկախ պետական կամ մասնավոր ոլորտներում կատարած աշխատանքից: Մասնագիտական աշխատանքային ստաժը ներառում է համապատասխան որակավորում ստանալուց հետո աշխատած ժամանակաշրջանը:

16) ժամանակավոր թափուր պաշտոն՝ սույն օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերով որոշակի ժամկետով թափուր պաշտոն:

ԳԼՈՒԽ 2

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԳՐԵՐԸ (ԱՇԽԱՏԱՏԵՐԻ ԿԿԱՐԳԻՐԸ) ԵՎ ԱՆՎԱՆԱՑԱՆԿԸ, ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

Հոդված 5. Քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագիրը (աշխատատեղի նկարագիրը) եւ անվանացանկը հաստատելը (փոփոխելը)

1. Քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագիրը (աշխատատեղի նկարագիրը) սահմանվում է՝ ելնելով համապատասխան մարմնի իրավասությունը սահմանող իրավական ակտերով նրա առջև դրված խնդիրներով պայմանավորված կառավարչական տվյալ մակարդակին ներկայացվող մասնագիտական պահանջներից: Քաղաքացիական ծառայության յուրաքանչյուր պաշտոն ունի անվանում, որը հնարավորին չափ ճշգրիտ արտացոլում է քաղաքացիական ծառայության պաշտոնի հիմնական գործառնությունները եւ չի կրում ընդհանրական բնույթ:
2. Համապատասխան մարմիններում քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատում է տվյալ մարմնի գլխավոր քարտուղարը, իսկ Հաշվեքննիչ պալատում՝ Հաշվեքննիչ պալատը:
3. Քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրի փոփոխությունը քաղաքացիական ծառայության պաշտոնից ազատման կամ ծառայությունը դադարեցնելու հիմք չէ, բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի:
4. Քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկը քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակում վարում են համապատասխան մարմինները: Քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկը հրապարակային է ծանոթացման համար:
5. Քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու իրավական հիմքի առաջացման պահից մեկ ամսվա ընթացքում համապատասխան մարմնի գլխավոր քարտուղարը հաստատված մեթոդաբանությունը համապատասխան կազմված եւ փաստաթղթերով հիմնավորված առաջարկությունը քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերի նախագծերի հետ ներկայացնում է քաղաքացիական ծառայության գրասենյակ:
6. Պաշտոնը քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկում ներառելու (հանելու)՝ քաղաքացիական ծառայության գրասենյակի համաձայնությունն ստանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, պաշտոնը ներառվում (հանվում) է քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակ, եւ հաստատվում է պաշտոնի անձնագիրը:
7. Քաղաքացիական ծառայության պաշտոնի գնահատման, դասակարգման, անվանումների, քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերի կազմման, պաշտոնների ընդհանուր համակարգում տեղակայման, իրավունքների եւ պարտականությունների, անվանացանկի վարման, ինչպես նաեւ տվյալ քաղաքացիական ծառայության պաշտոնը զբաղեցնելու համար քաղաքացիական ծառայողին մասնագիտական գիտելիքների ու կոմպետենցիաների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջներ սահմանելու մեթոդաբանությունը հաստատում է համակարգող փոխվարչապետը:

Հոդված 6. Քաղաքացիական ծառայության պաշտոնների դասակարգումը

1. Քաղաքացիական ծառայության պաշտոնները դասակարգվում են խմբերի՝ ելնելով այդ պաշտոնները զբաղեցնող անձանց աշխատանքի կազմակերպման եւ ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիազորությունների, գործունեության ազդեցության, շփոխների եւ ներկայացուցչության, խնդիրների բարդության եւ դրանց լուծման, ինչպես նաեւ մասնագիտական գիտելիքների եւ կոմպետենցիաների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջներից:
2. Քաղաքացիական ծառայության պաշտոնները դասակարգվում են հետևյալ խմբերի.
 - 1) քաղաքացիական ծառայության ղեկավար պաշտոններ.
 - 2) քաղաքացիական ծառայության մասնագիտական պաշտոններ:
3. Քաղաքացիական ծառայության ղեկավար պաշտոնների խումբը դասակարգվում է 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ եւ 5-րդ ենթախմբերի: Քաղաքացիական ծառայության մասնագիտական պաշտոնների խումբը դասակարգվում է 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ եւ 8-րդ ենթախմբերի:

Հոդված 7. Քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրի՝ կրթության եւ աշխատանքային ստաժի չափանիշները

1. Քաղաքացիական ծառայության պաշտոնները զբաղեցնելու համար Հայաստանի Հանրապետության քաղաքացին պետք է ունենա բարձրագույն կրթություն, բացառությամբ քաղաքացիական ծառայության մասնագիտական պաշտոնների 6-րդ, 7-րդ եւ 8-րդ ենթախմբերի պաշտոնների, որոնք զբաղեցնելու համար Հայաստանի Հանրապետության քաղաքացին պետք է ունենա առնվազն միջնակարգ կրթություն:
2. Քաղաքացիական ծառայության պաշտոնները զբաղեցնելու համար անհրաժեշտ է աշխատանքային ստաժի եւ փորձի առնվազն հետևյալ չափանիշները.
 - 1) քաղաքացիական ծառայության ղեկավար պաշտոնների 1-ին եւ 2-րդ ենթախմբերի պաշտոնների համար, բացառությամբ գլխավոր քարտուղարի քաղաքացիական ծառայության պաշտոնի, հանրային ծառայության առնվազն հինգ տարվա ստաժ կամ յոթ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ պաշտոնի անձնագրով պահանջվող աշխատանքի բնագավառում՝ յոթ տարվա աշխատանքային ստաժ: Գլխավոր քարտուղարի քաղաքացիական ծառայության պաշտոնի համար՝ հանրային ծառայության առնվազն հինգ տարվա ստաժ, որից երկու տարին առնվազն կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի պաշտոնում:
 - 2) քաղաքացիական ծառայության ղեկավար պաշտոնների 3-րդ, 4-րդ եւ 5-րդ ենթախմբերի պաշտոնների համար՝ հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ հինգը տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ պաշտոնի անձնագրով պահանջվող աշխատանքի բնագավառում՝ հինգ տարվա աշխատանքային ստաժ:
 - 3) քաղաքացիական ծառայության մասնագիտական պաշտոնների 1-ին եւ 2-րդ ենթախմբերի պաշտոնների համար՝ հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ պաշտոնի անձնագրով պահանջվող աշխատանքի բնագավառում՝ չորս տարվա աշխատանքային ստաժ:
 - 4) քաղաքացիական ծառայության մասնագիտական պաշտոնների 3-րդ, 4-րդ եւ 5-րդ ենթախմբերի պաշտոնների համար՝ հանրային ծառայության առնվազն մեկ տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ պաշտոնի անձնագրով պահանջվող աշխատանքի բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ:
3. Քաղաքացիական ծառայության մասնագիտական պաշտոնների 6-րդ, 7-րդ եւ 8-րդ ենթախմբերի պաշտոնների համար աշխատանքային ստաժ չի պահանջվում:
4. Հաշվի առնելով քաղաքացիական ծառայության պաշտոնի եւ (կամ) պաշտոնի ենթախմբերի առանձնահատկությունները, քաղաքացիական ծառայության գրասենյակի համաձայնությամբ, քաղաքացիական ծառայության պաշտոնի եւ (կամ) պաշտոնի ենթախմբերի համար կարող են սահմանվել կրթության եւ (կամ) աշխատանքային ստաժի եւ (կամ) աշխատանքի բնագավառի այլ չափանիշներ, ինչպես նաեւ քաղաքացիական ծառայության առանձին պաշտոնների համար՝ որակավորման չափանիշներ, այդ թվում՝ միջազգայնորեն ընդունված հավաստագրման համակարգեր: Այդ չափանիշները քաղաքացիական ծառայության գրասենյակի համաձայնությամբ ստանալուց հետո ամրագրվում են քաղաքացիական ծառայության համապատասխան պաշտոնների անձնագրերում մինչեւ սույն օրենքով սահմանված կարգով այդ պաշտոններն զբաղեցնելը:

ԳԼՈՒԽ 3

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼԸ

Հոդված 8. Քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելը

1. Քաղաքացիական ծառայության պաշտոններն զբաղեցվում են անժամկետ՝ մրցույթի արդյունքով կամ վարկանիշային ցուցակներից կամ փոխադրման կամ վերակազմակերպման եւ (կամ) կառուցվածքային փոփոխության արդյունքով կամ կադրերի ռեզերվից՝ մինչեւ սույն օրենքով սահմանված տարիքի լրանալը, եւ որոշակի ժամկետով՝ ժամկետային աշխատանքային պայմանագրով կամ տեղափոխության հետևանքով կամ գործուղման դեպքում:
2. Սույն օրենքով սահմանված կարգով քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունք ունեն քաղաքացիական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով ներկայացվող պահանջները բավարարող, հայերենին տիրապետող, 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները:

Հոդված 9. Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի տեսակները, առանձնահատկությունները

1. Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթը (այսուհետ՝ մրցույթ) հիմնված է հավասար հնարավորությունների եւ արժանիքների վրա:
2. Մրցույթը դասակարգվում է երկու տեսակի՝ արտաքին եւ ներքին:
3. Մրցույթներն անցկացնում են համապատասխան մարմինները, բացառությամբ գլխավոր քարտուղարի քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի, որն անցկացնում է քաղաքացիական ծառայության գրասենյակը:
4. Մրցույթ անցկացնելու համար նախապատրաստական աշխատանքներն իրականացնում է համապատասխան մարմնի անձնակազմի կառավարման ստորաբաժանումը:
5. Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի գլխավոր քարտուղարի մրցույթը կազմակերպում են անցկացնում է Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը:

1. Մրցույթը հայտարարվում է քաղաքացիական ծառայության պաշտոնը թափուր մատուց հետո՝ երեք ամսվա ընթացքում: Եթե հայտարարված մրցույթին մասնակցելու համար ոչ մի դիմում չի ներկայացվել, կամ ներկայացված բոլոր դիմումներում առկա է սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված հիմքերից որևէ մեկը, ինչպես նաև եթե մրցույթին մասնակցելու համար դիմում ներկայացրած անձանցից ոչ մեկը չի ներկայացել, կամ մրցույթի մասնակիցներից ոչ մեկը չի հաղթահարել թեստավորման փուլը, կամ հարցազրույցի փուլ անցած մասնակիցներից ոչ մեկը չի հաղթահարել հարցազրույցի փուլը կամ հաղթահարել է հարցազրույցի փուլը և պաշտոնի նշանակման համար դիմում չի ներկայացրել, ապա սույն պաշտոնի համար մրցույթ հայտարարվում է մեկ ամսվա ընթացքում:
2. Մինչև արտաքին մրցույթ հայտարարելը պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի որոշմամբ կարող է անցկացվել ներքին մրցույթ: Քաղաքացիական ծառայության պաշտոնը թափուր մատուց հետո սույն պաշտոնի զբաղեցնելու համար կարող է անցկացվել մեկ ներքին մրցույթ: Եթե ներքին մրցույթին մասնակցելու համար ոչ մի դիմում չի ներկայացվել, կամ ներկայացված բոլոր դիմումներում առկա է սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված հիմքերից որևէ մեկը, ինչպես նաև եթե ներքին մրցույթին մասնակցելու համար դիմում ներկայացրած անձանցից ոչ մեկը չի ներկայացել, կամ ներքին մրցույթի մասնակիցներից ոչ մեկը չի հաղթահարել թեստավորման փուլը, կամ հարցազրույցի փուլ անցած մասնակիցներից ոչ մեկը չի հաղթահարել հարցազրույցի փուլը կամ հաղթահարել է հարցազրույցի փուլը և պաշտոնի նշանակման համար դիմում չի ներկայացրել, ապա անցկացվում է արտաքին մրցույթ: Ներքին մրցույթին կարող են մասնակցել սույն մարմնի հետաքննության մարմնի ծառայողները և քաղաքացիական ծառայության կարգերի ղեկավարները: Քաղաքացիական ծառայության կարգերի ղեկավարները և գրասենյակի անդամները թույլատրվում են մասնակցել սույն մարմնի հետաքննության մարմնի ծառայողները և քաղաքացիական ծառայության կարգերի ղեկավարները:
3. Մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը մրցույթ անցկացնող համապատասխան մարմինը հրապարակում է մրցույթ անցկացնելուց ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ՝ մրցույթի նախապատրաստական աշխատանքներ իրականացնող մարմնի պաշտոնական կայքէջում, քաղաքացիական ծառայության գրասենյակի պաշտոնական կայքէջում և Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքէջում: Հայտարարության հետ հրապարակվում են նաև այն բնագավառները, որոնցից կազմված է լինելու թեստը:
4. Քաղաքացին չի մասնակցում մրցույթին, եթե չի բավարարում սույն օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասով և 17-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված պահանջները, և (կամ) առկա է «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով նախատեսված հիմքերից որևէ մեկը, և (կամ) առկա է սույն օրենքի 37-րդ հոդվածի 8-րդ մասով նախատեսված հիմքը:
5. Մրցույթին մասնակցելու համար քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է էլեկտրոնային տարբերակով: Մրցույթի մասնակցության հարցը որոշում է գլխավոր քարտուղարը՝ անձնակազմի կառավարման ստորաբաժանում և սույն կազմակերպության հիման վրա: Մրցույթի մասնակցության որոշման մասին անձնակազմի կառավարման ստորաբաժանումը երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային տարբերակով տեղեկացնում է դիմող քաղաքացուն:
6. Մրցույթ անցկացվում է երկու փուլով՝ թեստավորում և հարցազրույց: Մրցույթ անցկացվում է, եթե դիմել է առնվազն մեկ քաղաքացի:
7. Թեստավորում անցկացնում են համապատասխան մարմիններն էլեկտրոնային եղանակով՝ քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակում:
8. Քաղաքացիական ծառայության պաշտոնների առանձնահատկություններից էլեկտրոնային կարող են կազմվել տարբեր բովանդակությամբ թեստեր: Թեստերը պետք է բխեն քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրով սահմանված մասնագիտական գիտելիքների ու կրթատեղեկատվական տիրապետմանը ներկայացվող պահանջներից: Թեստերում ընդգրկվող առաջադրանքների հարաբերակցությունը որոշվում է ըստ պաշտոնների ենթախմբերի. որքան ցածր է պաշտոնի ենթախումբը, այնքան գերակշռում են սահմանափակած գիտելիքների վերաբերյալ առաջադրանքները:
9. Թեստերում ընդգրկվող առաջադրանքները, որոնք վերաբերում են սահմանափակ գիտելիքներին, կազմում է քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակում տեղադրում է համապատասխան մարմինը, իսկ կրթատեղեկատվական վերաբերյալ առաջադրանքները՝ քաղաքացիական ծառայության գրասենյակը:
10. Գլխավոր քարտուղարի քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի թեստում ընդգրկվող սահմանափակ գիտելիքների և կրթատեղեկատվական վերաբերյալ առաջադրանքները կազմում է քաղաքացիական ծառայության գրասենյակը:
11. Մրցույթի մասնակիցը, պատասխանելով թեստում ընդգրկված առաջադրանքներին, անմիջապես տեղեկանում է իր ստացած արդյունքների մասին: Թեստավորման արդյունքների հետ համաձայն չլինելու դեպքում մրցույթի մասնակիցն իր արդյունքների մասով կարող է բողոք ներկայացնել գլխավոր քարտուղարին: Գլխավոր քարտուղարը քննում է դիմումը և ընդունում արդյունքները փոփոխելու կամ նույնը թողնելու մասին որոշում: Գլխավոր քարտուղարի՝ քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնի համար անցկացվող մրցույթի թեստավորման արդյունքների հետ համաձայն չլինելու դեպքում մրցույթի մասնակիցն իր արդյունքների մասով կարող է բողոք ներկայացնել քաղաքացիական ծառայության գրասենյակի ղեկավարին: Քաղաքացիական ծառայության գրասենյակի ղեկավարը քննում է դիմումը և ընդունում արդյունքները փոփոխելու կամ նույնը թողնելու մասին որոշում:
12. Մրցույթի երկրորդ՝ հարցազրույցի փուլին մասնակցելու իրավունք են ձեռք բերում Կառավարության սահմանած միավորից բարձր առավելագույն միավորներ ստացած հինգ մասնակիցը: Եթե միևնույն արդյունք ունենալու դեպքում հնարավոր չէ պարզել առավելագույն միավորներ հավաքած է թեստավորման փուլը հաղթահարած հինգ մասնակցին, ապա միևնույն առավելագույն միավորներ հավաքած մասնակիցներն անցնում են հարցազրույցի փուլ: Թեստավորման փուլը հաղթահարած մասնակիցների թիվը հինգից պակաս լինելու դեպքում բոլոր մասնակիցներն իրավունք են ձեռք բերում մասնակցելու հարցազրույցի փուլին, եթե հավաքել են թեստավորման փուլը հաղթահարելու համար անհրաժեշտ միավորը:
13. Հարցազրույցն անցկացնում է սույն պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի ձեռավորած հանձնաժողովը, բացառությամբ գլխավոր քարտուղարի քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի, որի դեպքում հանձնաժողովը ձեռավորում է քաղաքացիական ծառայության գրասենյակը՝ համակարգող փոխվարչապետի հաստատած հանձնաժողովի անդամության թեկնածուների ցանկից:
14. Պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի ձեռավորած հանձնաժողովի կազմում ընդգրկվում են սույն պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը, այն կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը, որի թափուր պաշտոնի զբաղեցնելու համար հայտարարվել է սույն մրցույթը, անձնակազմի կառավարման ստորաբաժանման ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը, ինչպես նաև սույն պաշտոնի համար անհրաժեշտ մասնագիտական գիտելիքների և կրթատեղեկատվական տիրապետման մակարդակն ստուգելու կարողություններ ունեցող այլ անձինք:
15. Հանձնաժողովը կազմված է առնվազն հինգ անդամից:
16. Հարցազրույցի փուլը հաղթահարում է մեկ մասնակից: Հարցազրույցի արդյունքում հանձնաժողովը պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին ներկայացնում է եզրակացություն հարցազրույցի մասնակիցների վերաբերյալ՝ նշելով հարցազրույցի փուլը հաղթահարած միակ մասնակցին: Հանձնաժողովի եզրակացությունն ստանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը հարցազրույցի փուլը հաղթահարած միակ մասնակցին նշանակում է համապատասխան պաշտոնի:
17. Եթե երկու անգամ անընդմեջ հայտարարված արտաքին մրցույթին մասնակցելու համար ոչ մի դիմում չի ներկայացվել, կամ ներկայացված բոլոր դիմումներում առկա է սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված հիմքերից որևէ մեկը, ապա համապատասխան մարմինը սույն օրենքով սահմանված կարգով փոփոխում է սույն պաշտոնի համար սահմանված պահանջները:
18. Անվանացանկում կատարված լրացումների և փոփոխությունների հետևանքով առաջացած քաղաքացիական ծառայության նոր պաշտոնները, բացառությամբ համապատասխան մարմնի վերակազմակերպման և (կամ) կառուցվածքային փոփոխության հետևանքով առաջացած քաղաքացիական ծառայության պաշտոնների, զբաղեցվում են մրցույթով:
19. Համապատասխան մարմնում քաղաքացիական ծառայողի առաջադրացումն իրականացվում է միայն սույն օրենքով սահմանված մրցույթով:
20. Մրցույթի արդյունքով նույն համապատասխան մարմնում քաղաքացիական ծառայության այլ պաշտոնի նշանակվելու դեպքում քաղաքացիական ծառայողի հետ վերջնահաշվարկ չի կատարվում:
21. Մրցույթն անվավեր է ճանաչվում դատական կարգով: Մրցույթն անվավեր ճանաչվելու դեպքում հայտարարվում է մրցույթ, որն անցկացվում է սույն օրենքով սահմանված կարգով:
22. Մրցույթ անցկացնելու կարգը սահմանում է Կառավարությունը:
23. Թեստերը կազմվում են թեստային առաջադրանքները ձեռագրորեն, թեստային առաջադրանքների բովանդակային առանձնահատկությունները, թեստային առաջադրանքների քանակը, հարցազրույցի անցկացման մեթոդաբանությունը և ձեռնապիք սահմանում է համակարգող փոխվարչապետը:

1. Քաղաքացիական ծառայության մասնագիտական պաշտոնների 6-րդ, 7-րդ և 8-րդ ենթախմբերի պաշտոններն զբաղեցնելու համար հարցազրույցին մասնակցելու համար թեկնածուներն ընտրվում են վարկանիշային ցուցակներից:
2. Վարկանիշային ցուցակները կազմվում են համար առնվազն տարիներ երկու անգամ քաղաքացիական ծառայության գրասենյակն անցկացնում է թեստավորում: Ելնելով թեստավորման մասնակիցների թվից՝ թեստավորումը կարող է անցկացվել մեկ կամ մի քանի խմբով տարբեր օրերի և (կամ) ժամերի: Յուրաքանչյուր խմբի համար կազմվում է նոր թեստ:
3. Թեստավորմանը մասնակցելու համար քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է էլեկտրոնային տարբերակով: Թեստավորման մասնակցության հարցը որոշում է քաղաքացիական ծառայության գրասենյակի ղեկավարը՝ համապատասխան կառուցվածքային ստորաբաժանման տված եզրակացության հիման վրա: Քաղաքացիական ծառայության գրասենյակը թեստավորման մասնակցության որոշման մասին երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային տարբերակով տեղեկացնում է դիմող քաղաքացուն:
4. Քաղաքացին չի մասնակցում թեստավորմանը, եթե չի բավարարում սույն օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասով, 17-րդ հոդվածի 4-րդ մասով և «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով սահմանված պահանջները:
5. Թեստավորումը հաղթահարում են Կառավարության սահմանած նվազագույն միավորից բարձր միավոր ստացած մասնակիցները: Թեստավորման արդյունքներով քաղաքացիական ծառայության գրասենյակն առցանց կարգով վարում է վարկանիշային համարակալված ցուցակ: Միևնույն արդյունք հավաքած թեկնածուները գրանցվում են նույն համարի տակ:

4. Համապատասխան մարմինները հարցազրույցի հրավիրում են վարկանիշային ցուցակի 1-5-րդ համարներում գրանցված անձանց, որոնք բավարարում են քաղաքացիական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրի պահանջները:

7. Եթե պաշտոնի անձնագրով նախատեսված է մասնագիտական բարձրագույն կրթության պահանջ է վարկանիշային ցուցակի 1-5-րդ համարներում չկա համապատասխան մասնագիտություն ունեցող հինգ թեկնածու, ապա հրավիրվում են տվյալ մասնագիտությունն ունեցող առաջին հինգ թեկնածուները:

8. Վարկանիշային ցուցակում միանգամյա գրանցված լինելու առավելագույն ժամկետը երկու տարի է: Վարկանիշային ցուցակում գրանցման առավելագույն ժամկետը լրանալու օրվան հաջորդող օրը թեկնածուն ինքնաշխատ եղանակով հանվում է ցուցակից: Վարկանիշային ցուցակի թափուր համարները լրացվում են հաջորդաբար՝ նվազման կարգով ինքնաշխատ եղանակով:

9. Վարկանիշային ցուցակը համարվում է թեստավորման բոլոր խմբերի արդյունքներն ամփոփելու հաջորդ աշխատանքային օրը:

10. Քաղաքացիական ծառայության մասնագիտական պաշտոնների 6-րդ, 7-րդ և 8-րդ ենթախմբերի պաշտոններն զբաղեցնելու համար հարցազրույցը կազմակերպվում է անցկացվում է սույն օրենքի 10-րդ հոդվածի 13-16-րդ մասերով սահմանված կարգով: Պաշտոնի նշանակված թեկնածուն հանվում է վարկանիշային ցուցակից:

11. Վարկանիշային ցուցակները կազմելու համար անցկացվող թեստավորման և հարցազրույցի կազմակերպման կարգը սահմանում է Կառավարությունը:

12. Վարկանիշային ցուցակները կազմելու համար անցկացվող թեստավորման թեստերը կազմելու, թեստային առաջադրանքները ձևավորելու, թեստային առաջադրանքների բովանդակային առանձնահատկությունները, թեստային առաջադրանքների քանակը սահմանում է համակարգող փոխվարչապետը:

Հոդված 12. Քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելը տեղափոխման, փոխարման, գործուղման կարգով

1. Պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը մինչև երկու տարի ժամկետով պատճառաբանված որոշմամբ կարող է տեղափոխություն կատարել կառուցվածքային ստորաբաժանումների հավասարազոր քաղաքացիական ծառայության պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողների միջև, եթե վերջիններս բավարարում են քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրի պահանջները:

2. Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն առաջանալու դեպքում պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը կարող է նույն կամ այլ կառուցվածքային ստորաբաժանման քաղաքացիական ծառայողին յոթ աշխատանքային օրվա ընթացքում փոխարդել թափուր պաշտոնին, եթե նա բավարարում է քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրի պահանջները:

3. Փոխարդումից (փոխարդումներից) հետո թափուր մնացած պաշտոնը կարող է զբաղեցվել սույն օրենքով սահմանված արտաքին մրցույթով:

4. Քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոն առաջանալու դեպքում մինչև սահմանված հիմքի վերացումը պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը կարող է այլ կառուցվածքային ստորաբաժանման քաղաքացիական ծառայողին յոթ աշխատանքային օրվա ընթացքում փոխարդել այդ պաշտոնին, եթե նա բավարարում է քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրի պահանջները: Ժամանակավոր թափուր պաշտոնի փոխարդման դեպքում փոխարդված քաղաքացիական ծառայողի պարտականությունները կատարում է տվյալ պաշտոնի անձնագրով նախատեսված փոխարինող քաղաքացիական ծառայողը:

5. Գլխավոր քարտուղարը, աշխատանքային ծանրաբեռնվածությունը հաշվի առնելով, կարող է կառուցվածքային ստորաբաժանման մասնագիտական պաշտոնների խմբի պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողին, առանց ծառայությունը դադարեցնելու, իր պաշտոնով փոխարդել այլ կառուցվածքային ստորաբաժանում: Տվյալ դեպքում քաղաքացիական ծառայողն իրականացնելու է նույնբովանդակ աշխատանք, որ իրականացնում էր մինչև փոխարդումը: Այս դեպքում պաշտոնի անձնագրում գործառնությունների փոփոխություն չի կատարվում, այլ չափանիշներ են այլ պահանջներ չեն սահմանվում:

6. Փոխարդում իրականացվում է հավասարազոր քաղաքացիական ծառայության պաշտոնի:

7. Տեղափոխությունը, փոխարդումն իրականացվում են պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի որոշմամբ, քաղաքացիական ծառայողի համաձայնությամբ: Համապատասխան մարմնի աշխատանքների կազմակերպման առանձնահատկություններով պայմանավորված՝ Կառավարության որոշմամբ կարող են սահմանվել այն դեպքերը, երբ տեղափոխություն է (կամ) փոխարդում իրականացնելիս քաղաքացիական ծառայողի համաձայնությունը չի պահանջվում:

8. Տեղափոխության և փոխարդման դեպքերում քաղաքացիական ծառայողի հետ վերջնահաշվարկ չի կատարվում:

9. Թափուր կամ ժամանակավոր թափուր պաշտոն առաջանալու դեպքում մեկամսյա ժամկետում համապատասխան մարմինների ղեկավարների փոխադարձ համաձայնությամբ պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը քաղաքացիական ծառայողի համաձայնությամբ մինչև երեք տարի ժամկետով քաղաքացիական ծառայողին կարող է գործուղել այլ համապատասխան մարմին հավասարազոր պաշտոն զբաղեցնելու համար: Տվյալ դեպքում քաղաքացիական ծառայողը պետք է իրականացնի նույնբովանդակ աշխատանք, ինչպիսին իրականացնում էր մինչև գործուղումը: Այս դեպքում քաղաքացիական ծառայողի հետ վերջնահաշվարկ չի կատարվում, իսկ սահմանված ժամկետի ավարտից հետո առանց վերջնահաշվարկ կատարելու քաղաքացիական ծառայողն զբաղեցնում է իր նախկին պաշտոնը: Թափուր պաշտոնը գործուղման հետևանքով զբաղեցնելու դեպքում մինչև գործուղման ավարտը տվյալ պաշտոնի համար մրցույթ չի հայտարարվում:

10. Տեղափոխության, փոխարդման և գործուղման կարգով պաշտոն զբաղեցնելու կարգը են պայմանները սահմանում է Կառավարությունը՝ հաշվի առնելով համապատասխան մարմինների առանձնահատկությունները:

11. Տեղափոխության, փոխարդման և գործուղման կարգով պաշտոն զբաղեցնելու ժամանակ անձնակազմի կառավարման ընթացակարգային առանձնահատկությունները սահմանում է համակարգող փոխվարչապետը:

Հոդված 13. Քաղաքացիական ծառայության պաշտոնը որոշակի ժամկետով զբաղեցնելը

1. Քաղաքացիական ծառայության պաշտոնը որոշակի ժամկետով զբաղեցվում է՝

- 1) հիդիության և ծննդաբերության արձակուրդի դեպքում.
- 2) մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդի դեպքում.
- 3) պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելու դեպքում.
- 4) քաղաքացիական ծառայողի կողմից իր ծառայողական պարտականությունները կատարելու ժամանակավոր անհնարինության դեպքում.
- 5) եռամսյա ժամկետը գերազանցող վերապատրաստման կամ ծառայողական գործուղման մեկնելու դեպքում.
- 6) 12-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված դեպքում.
- 7) օրենքով սահմանված այլ դեպքերում:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված դեպքերում այդ պաշտոններն զբաղեցվում են պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի հայեցողությամբ՝ տվյալ պաշտոնի անձնագրով նախատեսված փոխարինող քաղաքացիական ծառայողի կողմից կամ սույն օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով կամ հաշվի առնելով սույն օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասով և 17-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված պահանջները և «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով նախատեսված հիմքերը՝ մեկ այլ անձի հետ (այդ թվում՝ ռեզերվում գտնվող) ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելով:

3. Չի թույլատրվում այլ անձի հետ ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքել, եթե քաղաքացիական ծառայության տվյալ թափուր պաշտոնն առաջացել է այդ անձի ծառայությունը սույն օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասի 2-4-րդ, 6-10-րդ և 16-րդ կետերով նախատեսված հիմքերից որևէ մեկով դադարեցվելու հետևանքով:

4. Ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու կարգը սահմանում է Կառավարությունը:

Հոդված 14. Կադրերի ռեզերվից քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելը

1. Համապատասխան մարմնում քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն առաջանալու դեպքում մինչև մրցույթ հայտարարելը պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը կարող է այդ պաշտոնում նշանակել քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվից սույն օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով ժամկետային աշխատանքային պայմանագրով պաշտոն զբաղեցնող այն քաղաքացիական ծառայողին, որ ռեզերվում գրանցվել է՝ ազատվելով տվյալ մարմնի քաղաքացիական ծառայության պաշտոնից:

Հոդված 15. Քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու առանձնահատուկ դեպքերը և քաղաքացիական ծառայության կազմակերպման առանձնահատկությունները

1. Պետական և ծառայողական գաղտնիք պարունակող տեղեկությունների հետ առչվող քաղաքացիական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց պաշտոնի նշանակման, վերապատրաստման, կատարողական գնահատման, ծառայողական քննությունների հետ կապված առանձնահատկությունները և քաղաքացիական ծառայության այդ պաշտոնների ցանկը հաստատում է համակարգող փոխվարչապետը՝ համապատասխան մարմնի ղեկավարի առաջարկությամբ՝ համաձայնեցնելով ազգային անվտանգության լիազոր մարմնի ղեկավարի հետ:

2. «Պիվանագիտական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով գործուղված ղիվանագետների կողմից քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու կարգը և դեպքերը սահմանում է Կառավարությունը, իսկ պաշտոնների ցանկը՝ համակարգող փոխվարչապետը:

3. Վարչապետին, Կառավարությանը և նախարարություններին ենթակա պետական մարմինները, որոնք չունեն աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներ և գլխավոր քարտուղար, այդ մարմինների՝ քաղաքացիական ծառայության հարաբերությունների մասնակցությունն իրականացնում է այն համապատասխան մարմինը, որի ենթակայությամբ գործում են:

Հոդված 16. Քաղաքացիական ծառայության պաշտոնի նշանակումը և ազատումը (ծառայության դադարեցումը)

1. Գլխավոր քարտուղարներին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված մարմինների գլխավոր քարտուղարներին:

2. Սույն մասում նշված մարմինների գլխավոր քարտուղարներին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է՝

- 1) Կենտրոնական ընտրական հանձնաժողովում՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահը.
- 2) Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովում՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի նախագահը.
- 3) Հաշվեքննիչ պալատում՝ Հաշվեքննիչ պալատի նախագահը.
- 4) Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում՝ Մարդու իրավունքների պաշտպանը.
- 5) Հայաստանի Հանրապետության դատախազությունում՝ գլխավոր դատախազը.
- 6) Հայաստանի Հանրապետության քննչական մարմիններում՝ քննչական մարմինների ղեկավարները.
- 7) Հայաստանի Հանրապետության ինքնավար մարմիններում՝ ինքնավար մարմինների ղեկավարները:

3. Քաղաքացիական ծառայության ղեկավար պաշտոնների 1-ին, 2-րդ և 3-րդ ենթախմբերի պաշտոնները զբաղեցնող քաղաքացիական ծառայողներին, ներքին առողջտրոններին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է համապատասխան մարմնի ղեկավարը:

4. Քաղաքացիական ծառայության մյուս պաշտոններում նշանակում և այդ պաշտոններից ազատում է գլխավոր քարտուղարը:

Հոդված 17. Քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու փորձաշրջանը, առավելագույն տարիքը

1. Մրցույթի արդյունքում քաղաքացիական ծառայության պաշտոն առաջին անգամ զբաղեցնող անձի նշանակումն իրականացվում է փորձաշրջանով՝

- 1) ղեկավար պաշտոնների խմբի համար՝ 12 ամիս.
- 2) մասնագիտական պաշտոնների 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ ենթախմբերի պաշտոնների համար՝ 9 ամիս.
- 3) մասնագիտական պաշտոնների 6-րդ, 7-րդ և 8-րդ ենթախմբերի պաշտոնների համար՝ 6 ամիս:

2. Փորձաշրջանի ընթացքում քաղաքացիական ծառայողը չի կարող սույն օրենքի 12-րդ հոդվածով սահմանված կարգով զբաղեցնել քաղաքացիական ծառայության այլ պաշտոն: Փորձաշրջանի ընթացքում մրցույթի արդյունքում այլ պաշտոնի նշանակվելու դեպքում քաղաքացիական ծառայողի նկատմամբ սահմանվում է փորձաշրջան:

3. Փորձաշրջանի հետ կապված առանձնահատկությունները սահմանում է համակարգող փոխվարչապետը՝ հաշվի առնելով պաշտոնների խմբերը, ենթախմբերը, պաշտոնների առանձնահատկությունները:

4. Քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքը 65 տարին է: Քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքը լրանալու դեպքում տվյալ պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի որոշմամբ քաղաքացիական ծառայողը կարող է մինչև մեկ տարի ժամկետով շարունակել զբաղեցնել իր պաշտոնը:

Գ Լ ՈՒ Ն 4

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Հոդված 18. Քաղաքացիական ծառայողի կատարողականի գնահատումը

1. Քաղաքացիական ծառայողի կատարողականն աշխատանքային ծրագրով նախատեսված աշխատանքի արդյունքները և այդ արդյունքներին հասնելու արդյունավետությունն է, որը գնահատում է անմիջական ղեկավարը:

2. Կատարողականի գնահատումն իրականացվում է տարին մեկ անգամ: Ցուրաբանյուր կիսամյակի ավարտին իրականացվում է կատարողականի ընթացիկ գնահատում:

3. Կատարողականի գնահատականի (նաեւ ընթացիկի) հետ համաձայն չլինելու դեպքում քաղաքացիական ծառայողը կարող է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով այն բողոքարկել գնահատումն իրականացրած պաշտոնատար անձի անմիջական ղեկավարին:

4. Կատարողականի գնահատման արդյունքները հիմք են սահմանված կարգով խրախուսում և (կամ) վերապատրաստման անհատական ծրագրեր կազմելու, ինչպես նաեւ հանրային ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում նախապատվության իրավունքից օգտվելու համար:

5. Քաղաքացիական ծառայողի կատարողականի գնահատման կարգը սահմանում է Կառավարությունը՝ հաշվի առնելով համապատասխան մարմինների առանձնահատկությունները:

Հոդված 19. Քաղաքացիական ծառայողի վերապատրաստումը

1. Քաղաքացիական ծառայողներն իրավունք ունեն բարելավելու և պարտավոր են բարելավել իրենց մասնագիտական գիտելիքները և կոմպետենցիաները շարունակական մասնագիտական զարգացման սկզբունքի վրա հիմնված վերապատրաստումների մասնակցելու միջոցով:

2. Համապատասխան մարմինները պարտավոր են ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները վերապատրաստմանը կազմակերպելու և այդ վերապատրաստումների քաղաքացիական ծառայողների մասնակցությունն ապահովելու համար:

3. Համապատասխան մարմիններում վերապատրաստման գործընթացը կազմակերպում է գլխավոր քարտուղարը:

4. Վերապատրաստումն իրականացվում է յուրաքանչյուր քաղաքացիական ծառայողի համար ըստ անհատական ծրագրի, որը կազմվում (փոփոխվում) է քաղաքացիական ծառայողի տարեկան կատարողականի գնահատմանը զուգընթաց իրականացված վերապատրաստման կարիքների գնահատումից:

5. Վերապատրաստում անցկացվում է նաեւ քաղաքացիական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով քաղաքացիական ծառայողի մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների տիրապետման նոր պահանջների սահմանման դեպքում՝ քաղաքացիական ծառայողի կամ կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի նախաձեռնությամբ:

6. Վերապատրաստման մասնակցության առավելագույն ժամկետը վեց ամիս է:

7. Գլխավոր քարտուղարը վերապատրաստման կարիքների գնահատման արդյունքներն ամփոփելուց հետո կազմում է համապատասխան մարմնի քաղաքացիական ծառայողների վերապատրաստման ծրագիրը, որը ներառում է վերապատրաստման կարիքները, վերապատրաստման եղանակները, հատկացված կրեդիտները, ժամանակի բաշխվածությունը, վերապատրաստում իրականացնող կազմակերպությունները, վերապատրաստում իրականացնող մասնագետների թեկնածուները և համակարգող փոխվարչապետի որոշմամբ սահմանված այլ չափանիշներ, և այդ ծրագիրը ներկայացնում է քաղաքացիական ծառայության գրասենյակ՝ համաձայնեցման:

8. Քաղաքացիական ծառայության գրասենյակն ուսումնասիրում է ծրագիրը և տալիս համաձայնություն վերապատրաստման ծրագիրը հաստատելու համար: Համաձայնություն ստանալուց հետո գլխավոր քարտուղարը հաստատում է վերապատրաստման ծրագիրը և քաղաքացիական ծառայողներին տեղեկացնում այդ ծրագրից բխող քաղաքացիական ծառայողի վերապատրաստման անհատական ծրագիրը: Հաշվեքննիչ պալատում վերապատրաստման ծրագիրը հաստատում է Հաշվեքննիչ պալատը:

9. Գլխավոր քարտուղարն անհրաժեշտության դեպքում սույն հոդվածի 7-րդ և 8-րդ մասերով սահմանված կարգով կարող է վերանայել վերապատրաստման ծրագիրը:

10. Կոմպետենցիաների վերաբերյալ վերապատրաստումները կազմակերպում է քաղաքացիական ծառայության գրասենյակը, իսկ մասնագիտական գիտելիքների վերաբերյալ վերապատրաստումները՝ համապատասխան մարմինը:

11. Համապատասխան մարմինների ծրագրերի ուսումնասիրության ժամանակ քաղաքացիական ծառայության գրասենյակը կարող է առաջարկել վերանայել վերապատրաստման ծրագիրը, ինչպես նաեւ այդ ծրագրերում կարող է ներառել նաեւ կոմպետենցիաների վերաբերյալ կազմված վերապատրաստման ծրագրերը:

12. Վերապատրաստման հետ կապված ծախսերը կատարվում են պետական բյուջեի, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին:

13. Վերապատրաստումների արդյունքով քաղաքացիական ծառայողը ստանում է կրեդիտներ: Անհատական ծրագրով հաստատված համապատասխան կրեդիտներն ստանալուց հետո քաղաքացիական ծառայողը համարվում է վերապատրաստված:

14. Սույն օրենքի հիման վրա վերապատրաստման կարգը, վերապատրաստում իրականացնող կազմակերպություններին ներկայացվող հիմնական չափանիշները, կրեդիտների սահմանման հիմնական սկզբունքները, կարիքները գնահատելու և անհատական ծրագիր կազմելու, ինչպես նաեւ համապատասխան մարմնի վերապատրաստման ծրագիրը կազմելու, միջազգային հավաստագրերի ճանաչելիության սկզբունքները, տեսակները սահմանում է համակարգող փոխվարչապետը:

Գ Լ ՈՒ Ն 5

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ԱՌԱՆՁԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հողված 20. Քաղաքացիական ծառայողի նկատմամբ կիրառվող խրախուսանքի տեսակները

1. Երկարամյա ծառայության եւ (կամ) ծառայողական պարտականությունները եւ (կամ) հանձնարարականները (ատաջադրանքները) բարեխղճորեն կատարելու, ինչպէս նաեւ օրենսդրութեամբ սահմանված այլ ղեկավարում քաղաքացիական ծառայողի նկատմամբ կարող են կիրառվել խրախուսանքի հետեւյալ տեսակները.

- 1) շնորհակալության հայտարարում.
- 2) դրամական պարգևատրում.
- 3) հուշանվերով պարգևատրում.
- 4) պատվոգրով (մեդալով) պարգևատրում.
- 5) լրացուցիչ վճարովի արձակուրդի տրամադրում.
- 6) կարգապահական տույժի հանում:

2. Քաղաքացիական ծառայողի նկատմամբ կարող են կիրառվել նաեւ օրենսդրությամբ սահմանված խրախուսման այլ տեսակներ:

3. Քաղաքացիական ծառայողի նկատմամբ խրախուսանքները կիրառում է նրան պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը:

4. Քաղաքացիական ծառայության ղեկավար պաշտոնների 1-ին, 2-րդ եւ 3-րդ ենթախմբերի պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողներին, որպէս խրախուսանք, Հանրապետության Նախագահը օրենքով սահմանված կարգով կարող է շնորհել բարձրագույն դասային աստիճաններ:

5. Բարձրագույն դասային աստիճաններն են՝ քաղաքացիական ծառայության առաջին դասի պետական խորհրդականի դասային աստիճան, քաղաքացիական ծառայության երկրորդ դասի պետական խորհրդականի դասային աստիճան, քաղաքացիական ծառայության երրորդ դասի պետական խորհրդականի դասային աստիճան: Դասային աստիճաններին բարձր քաղաքացիական ծառայության առաջին դասի պետական խորհրդականի դասային աստիճանն է:

Հողված 21. Քաղաքացիական ծառայողի նկատմամբ կիրառվող կարգապահական պատասխանատվության միջոցները եւ առանձնահատկությունները, կարգապահական տույժ կիրառելու որոշումը, պաշտոնից ազատելու կամ ծառայության դադարեցման մասին որոշումը բողոքարկելը

1. Ծառայողական պարտականություններն անհարգելի պատճառով չկատարելու եւ (կամ) ոչ պատշաճ կատարելու եւ (կամ) ծառայողական լիազորությունները վերազանցելու եւ (կամ) աշխատանքային կարգապահական ներքին կանոնները խախտելու եւ (կամ) քաղաքացիական ծառայողի վարքագծի կանոնները խախտելու եւ (կամ) հանրային ծառայողի նկատմամբ կիրառվող այլ սահմանափակումները չպահպանելու եւ (կամ) շահերի բախման կանոնները, նվերներ ընդունելու արգելքը խախտելու դեպքերում քաղաքացիական ծառայողի նկատմամբ սահմանված կարգով կիրառվում են սույն օրենքով սահմանված կարգապահական տույժերը:

2. Կարգապահական տույժերը դասակարգվում են երկու տեսակի՝ թեթեւ եւ խիստ.

1) թեթեւ կարգապահական տույժերն են՝

ա. նախազուշացում,

բ. նկատողություն.

2) խիստ կարգապահական տույժերն են՝

ա. խիստ նկատողություն,

բ. աշխատավարձի իջեցում մինչեւ 20 տոկոսով, բայց ոչ ավելի, քան բազային աշխատավարձի չափը.

գ. ծառայության դադարեցում:

3. Կարգապահական տույժ կիրառվում է ծառայողական քննություն անցկացնելուց հետո:

4. Կարգապահական տույժ նշանակվում է, եթե երեք ամսից ավելի չի անցել խախտման հայտնաբերման օրվանից՝ չհաշված քաղաքացիական ծառայողի ժամանակավոր անաշխատունակության պատճառով բացակայության, գործուղման, վերապատրաստման կամ արձակուրդի մեջ գտնվելու ժամանակահատվածները:

5. Կարգապահական տույժ նշանակվել չի կարող, եթե վեց ամսից ավելի է անցել խախտում կատարելու օրվանից: Եթե խախտումը հայտնաբերվում է ֆինանսատնտեսական գործունեության, գումարային կամ այլ արժեքների ստուգման (այդ թվում՝ գույքագրման) ընթացքում, ապա կարգապահական տույժը կարող է կիրառվել, եթե խախտումը կատարելու օրվանից անցել է ոչ ավելի, քան երեք տարի:

6. Կարգապահական տույժ նշանակելիս հաշվի են առնվում խախտման բնույթը, բովանդակությունը, այն հանգամանքները, որի պարագայում կատարվել է խախտումը, խախտման հետեւանքները, նախկինում քաղաքացիական ծառայողի նկատմամբ կարգապահական տույժ կիրառված լինելու եւ (կամ) խախտումներ կատարած լինելու հանգամանքները:

7. Կարգապահական տույժի մասին քաղաքացիական ծառայողին հաղորդվում է ոչ ուշ, քան կարգապահական տույժ նշանակելուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում:

8. Յուրաքանչյուր խախտման համար կարող է նշանակվել մեկ կարգապահական տույժ: Սույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված կարգապահական տույժը կրկին չի կարող կիրառվել, եթե կարգապահական տույժ հանված չէ, կամ չի լրացել սույն հոդվածի 9-րդ մասով սահմանված ժամկետը:

9. Եթե քաղաքացիական ծառայողը թեթեւ կարգապահական տույժ նշանակելու օրվանից հետո՝ վեց ամսվա ընթացքում, նոր կարգապահական տույժի չի ենթարկվել, իսկ խիստ կարգապահական տույժ նշանակելու օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, նոր կարգապահական տույժի չի ենթարկվել, ապա նա համարվում է կարգապահական տույժի չենթարկված:

10. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված կարգապահական տույժերը քաղաքացիական ծառայողի նկատմամբ կիրառում է նրան պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը:

11. Քաղաքացիական ծառայողն իր նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու, պաշտոնից ազատելու կամ ծառայությունը դադարեցնելու մասին որոշումը կարող է բողոքարկել պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի անմիջական ղեկավարին կարգապահական տույժ կիրառելու մասին, պաշտոնից ազատելու կամ ծառայությունը դադարեցնելու մասին որոշմանը ծանուցվելու օրվանից հաշված՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում:

12. Սույն հոդվածի 11-րդ մասով սահմանված կարգով բողոք բերելը կասեցնում է բողոքարկվող ակտի կատարումը:

13. Սույն հոդվածի 11-րդ մասով սահմանված բողոքարկման կարգը չի տարածվում քաղաքացիական ծառայողի վարքագծի կանոնները խախտելու, հանրային ծառայողի նկատմամբ կիրառվող այլ սահմանափակումները չպահպանելու, շահերի բախման կանոնները խախտելու, նվերներ ընդունելու արգելքը խախտելու դեպքերում կիրառված կարգապահական տույժերի վրա: Նշված դեպքերում կիրառված կարգապահական տույժերը բողոքարկվում են դատական կարգով:

14. Քննարկելով բերված բողոքը՝ իրավասու պաշտոնատար անձն իրավասու է՝

1) բավարարելու բողոքն ամբողջությամբ կամ մասնակիորեն՝ փոփոխել կարգապահական տույժի տեսակը կամ ճանաչել կարգապահական տույժ կիրառելու մասին կամ պաշտոնից ազատելու կամ ծառայությունը դադարեցնելու մասին որոշումն անվավեր.

2) մերժել բողոքը՝ կարգապահական տույժ կիրառելու մասին կամ պաշտոնից ազատելու կամ ծառայությունը դադարեցնելու մասին որոշումը թողնելով անփոփոխ:

15. Քաղաքացիական ծառայության պաշտոնից ազատելու կամ ծառայությունը դադարեցնելու մասին որոշումն անվավեր ճանաչվելու դեպքում քաղաքացիական ծառայողը վերականգնվում է իր պաշտոնում վարչական կամ դատական ակտն ուժի մեջ մտնելուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, եւ հարկադիր պարապրուդի դիմաց ստանում է հատուցում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով եւ չափով:

16. Քաղաքացիական ծառայողն իր նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու, այդ թվում՝ քաղաքացիական ծառայության պաշտոնից ազատելու կամ ծառայությունը դադարեցնելու մասին որոշումը կարող է բողոքարկել դատական կարգով:

17. Քաղաքացիական ծառայողների նկատմամբ սույն օրենքով սահմանված կարգով կարող է կիրառվել նյութական պատասխանատվություն՝ օրենքով սահմանված չափով:

Հողված 22. Ծառայողական քննությունը

1. Սույն օրենքով նախատեսված դեպքերում պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձն նշանակում է ծառայողական քննություն՝ նշելով ծառայողական քննության անցկացման հիմքերը, պարզաբանման ենթակա հարցերը եւ անցկացման եղանակը:

2. Քաղաքացիական ծառայողի վարքագծի կանոնների, անհամատեղելիության պահանջների, հանրային ծառայողի նկատմամբ կիրառվող այլ սահմանափակումների, շահերի բախման, նվերներ ընդունելու արգելքի վերաբերյալ հարցերի ուսումնասիրության համար նշանակված ծառայողական քննությունն անցկացնում է քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողովը:

3. Քաղաքացիական ծառայողի վարքագծի կանոնների, անհամատեղելիության պահանջների հանրային ծառայողի նկատմամբ կիրառելի այլ սահմանափակումների, շահերի բախման, նվերներ ընդունելու արգելքի վերաբերյալ այլ անձի դիմումի եւ (կամ) լրատվամիջոցների հրապարակումների հիման վրա ծառայողական քննություն նշանակում է գլխավոր քարտուղարը:

4. Ծառայողական քննության անցկացման ժամանակ անհրաժեշտության դեպքում ծառայողական քննություն նշանակած պաշտոնատար անձը, իր որոշմամբ, կարող է ներգրավել ծառայողական քննության արդյունքներով չշահագրգռված մասնագետ՝ խորհրդատվություն տրամադրելու համար:

5. Ծառայողական քննություն անցկացնելու ընթացքում քաղաքացիական ծառայողի (քաղաքացիական ծառայողների) ծառայողական պարտականությունների կատարումը ծառայողական քննություն անցկացնելու ժամկետում պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը կարող է կասեցնել՝ պահպանելով քաղաքացիական ծառայողի վարձատրությունը:

6. Ծառայողական քննության կտրեթում հանցագործությունների եւ (կամ) զանցանքների հատկանիշներ հայտնաբերելու դեպքերում այդ մասին հայտնվում է համապատասխան պետական մարմիններին, եւ ծառայողական քննությունը կասեցվում է:

7. Ծառայողական քննության արդյունքով ծառայողական քննություն վարողը պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին ներկայացնում է եզրակացություն, որն առնվազն ներառում է ծառայողական քննության մասին համապատասխան որոշում, բացառության սույն օրենքի 35-րդ հոդվածով նախատեսված դեպքերի:

8. Պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը սույն օրենքի 21-րդ հոդվածի 11-րդ մասով նախատեսված ժամկետից հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, քննարկում է եզրակացությունը եւ ընդունում համապատասխան որոշում, բացառության սույն օրենքի 35-րդ հոդվածով նախատեսված դեպքերի:

9. Ծառայողական քննություն անցկացնելու կարգը սահմանում է Կառավարությունը:

Հոդված 23. Քաղաքացիական ծառայողի իրավական վիճակը համապատասխան մարմնի վերակազմակերպման եւ կառուցվածքային փոփոխության ժամանակ

1. Համապատասխան մարմնի վերակազմակերպումը եւ (կամ) կառուցվածքային փոփոխությունը քաղաքացիական ծառայողին պաշտոնից ազատելու (լիազորությունները դադարեցնելու) հիմք չէ, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք ուղեկցվում են համապատասխան մարմնի վերակազմակերպմամբ եւ (կամ) կառուցվածքային փոփոխությամբ պայմանավորված հաստիքների եւ (կամ) քաղաքացիական ծառայության պաշտոնների կրճատմամբ եւ (կամ) համապատասխան մարմնի վերակազմակերպմամբ եւ (կամ) կառուցվածքային փոփոխությամբ պայմանավորված՝ պաշտոնների անձնագրերում այնպիսի նոր պահանջների սահմանմամբ, որոնց բավարարումը հնարավոր չէ ապահովել վերապատրաստմամբ:

2. Վերակազմակերպման եւ (կամ) կառուցվածքային փոփոխությամբ պայմանավորված հաստիքների եւ (կամ) քաղաքացիական ծառայության պաշտոնների կրճատման դեպքում աշխատանքային գործունեությունը շարունակելու նախապատվության իրավունքը տրվում է հոյ կամ մինչեւ երեք տարեկան երեխա խնամող կամ պարտադիր զինվորական ծառայության գորակրչված քաղաքացիական ծառայողին, իսկ այս պայմանի հավասարության կամ բացակայության դեպքում՝ քաղաքացիական ծառայության առավել երկար աշխատանքային ստաժ եւ վերջին երեք տարվա ընթացքում կատարողականի գնահատման ավելի բարձր արդյունքներ ունեցող քաղաքացիական ծառայողին: Նշված պայմանների հավասարության կամ բացակայության դեպքերում աշխատանքային գործունեությունը շարունակելու նախապատվությունը որոշում է համապատասխան մարմնի ղեկավարը:

3. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան մարմնի աշխատողների քանակի կրճատման դեպքում աշխատանքային գործունեությունը շարունակելու նախապատվությունը որոշում է համապատասխան մարմնի ղեկավարը:

4. Կառուցվածքային փոփոխության ժամանակ կառուցվածքային փոփոխության ենթարկվող կառուցվածքային ստորաբաժանման քաղաքացիական ծառայողն իր հաստիքային միավորով կարող է տեղափոխվել կառուցվածքային փոփոխության չենթարկվող կառուցվածքային ստորաբաժանում՝ հավասարազոր կամ ցածր քաղաքացիական ծառայության պաշտոնի՝ իր համաձայնությամբ:

5. Համապատասխան մարմնի վերակազմակերպման եւ (կամ) կառուցվածքային փոփոխության հետեւանքով քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկում առաջացած պաշտոններն զբաղեցվում են անվանացանկում փոփոխություններ կատարելուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով:

6. Համապատասխան մարմնի վերակազմակերպման եւ (կամ) կառուցվածքային փոփոխության ժամանակ քաղաքացիական ծառայողը վերանշանակվում է մինչեւ վերակազմակերպումը զբաղեցրած պաշտոնին հավասարազոր պաշտոնի կամ ավելի ցածր պաշտոնի՝ իր համաձայնությամբ, բացառությամբ առաջնադասման դեպքի: Առաջնադասման դեպքում քաղաքացիական ծառայողի հետ կնքվում է ժամկետային աշխատանքային պայմանագիր, եւ հայտարարվում է մրցույթ տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար:

7. Քաղաքացիական ծառայության այն պաշտոնները, որոնք չեն համարվել սույն հոդվածով սահմանված կարգով, զբաղեցվում են մրցույթով:

8. Վերակազմակերպումից եւ (կամ) կառուցվածքային փոփոխության արդյունքում քաղաքացիական ծառայողի հետ վերջնահաշվարկ չի կատարվում:

9. Վերակազմակերպումից եւ (կամ) կառուցվածքային փոփոխության արդյունքում, եթե անվանացանկից հանվում է սույն օրենքի 12-րդ հոդվածի 9-րդ մասով գործուղված քաղաքացիական ծառայողի պաշտոնը, ապա գործուղման ժամկետի ավարտից հետո քաղաքացիական ծառայողին առաջարկվում է հավասարազոր կամ ցածր պաշտոն: Եթե քաղաքացիական ծառայողը չի տալիս համաձայնություն առաջարկված պաշտոնում նշանակվելու համար, ապա նա զրահցվում է կադրերի ռեզերվում:

10. Վերակազմակերպումից եւ (կամ) կառուցվածքային փոփոխությունից հետո անձնակազմի կառավարման ընթացակարգային առանձնահատկությունները սահմանում է համակարգող փոխվարչապետը:

Հոդված 24. Քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվը

1. Քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվը քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակում վարում են համապատասխան մարմինները:

2. Գործունեությունը դադարած մարմինների կադրերի ռեզերվը վարում, վարձատրությունը տրամադրում է քաղաքացիական ծառայության գրասենյակը:

3. Քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվում, իրենց դիմումի համաձայն, գրանցվում են սույն օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-6-րդ կետերով նախատեսված հիմքերով քաղաքացիական ծառայության պաշտոնից ազատված քաղաքացիական ծառայողները:

4. Քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվում գրանցված լինելու միանգամյա առավելագույն ժամկետը վեց ամիս է, բայց ոչ ավելի, քան կադրերի ռեզերվում գրանցված քաղաքացիական ծառայողի 65 տարին լրանալը: Քաղաքացիական ծառայողը իր դիմումի համաձայն կարող է հանվել կադրերի ռեզերվից վաղաժամկետ:

5. Կադրերի ռեզերվում գրանցված լինելու ժամանակահատվածը համարվում է քաղաքացիական ծառայության ստաժ: Քաղաքացիական ծառայողը օրենքով սահմանված կարգով երեք ամիս ստանում է վարձատրություն այն համապատասխան մարմնից, որտեղ զբաղեցրել է քաղաքացիական ծառայության պաշտոն:

6. Կադրերի ռեզերվում գրանցվելու դեպքում քաղաքացիական ծառայողի հետ վերջնահաշվարկ չի կատարվում: Այս դեպքում քաղաքացիական ծառայողի հետ վերջնահաշվարկը կատարվում է, եթե քաղաքացիական ծառայողի լիազորությունները դադարում են սույն օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասի 15-րդ կետով նախատեսված հիմքով:

7. Եթե քաղաքացիական ծառայողը սույն օրենքի 13-րդ հոդվածով սահմանված կարգով զբաղեցնում է քաղաքացիական ծառայության պաշտոն նույն համապատասխան մարմնում, ապա այս դեպքում կադրերի ռեզերվից դուրս գալու դեպքում վերջնահաշվարկ չի կատարվում, իսկ այլ համապատասխան մարմնում զբաղեցնելու դեպքում կատարվում է վերջնահաշվարկ:

8. Եթե քաղաքացիական ծառայողը սույն օրենքի 14-րդ հոդվածով սահմանված կարգով զբաղեցնում է քաղաքացիական ծառայության պաշտոն, ապա այս դեպքում կադրերի ռեզերվից դուրս գալու դեպքում վերջնահաշվարկ չի կատարվում:

9. Քաղաքացիական ծառայողը հանվում է կադրերի ռեզերվից հանրային պաշտոն կամ հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու կամ այլ աշխատանքի անցնելու դեպքում:

10. Կադրերի ռեզերվում գրանցված ժամանակ քաղաքացիական ծառայողը չունի արձակուրդի իրավունք, եւ վերջնահաշվարկի մեջ ռեզերվում գրանցված լինելու ժամանակահատվածը չի հաշվարկվում:

11. Քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվը վարելու, կադրերի ռեզերվում գրանցելու եւ կադրերի ռեզերվից հանելու կարգը սահմանում է Կառավարությունը:

Հոդված 25. Քաղաքացիական ծառայողի անձնական գործը եւ քաղաքացիական ծառայողների գրանցամատյանը

1. Քաղաքացիական ծառայողի ծառայողական գործունեության ընթացքն արտացոլվում է նրա անձնական գործում:

2. Քաղաքացիական ծառայողի անձնական գործը գրանցամատյանի բաղկացուցիչ մաս է, որը քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակում վարում է համապատասխան մարմինը:

3. Գրանցամատյան վարելու ընթացակարգային առանձնահատկությունները սահմանում է համակարգող փոխվարչապետը:

Հոդված 26. Քաղաքացիական ծառայողի վարձատրությունը

1. Յուրաքանչյուր քաղաքացիական ծառայող, առանց որեւէ խտրականության, ունի աշխատանքի համար համարժեք վարձատրության իրավունք:

2. Քաղաքացիական ծառայողը (նաեւ քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվում գրանցված քաղաքացիական ծառայողը) ստանում է վարձատրություն՝ «Պետական պաշտոններ եւ պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով եւ ժամկետում:

27. Քաղաքացիական ծառայողի աշխատանքային հարաբերությունները

1. Քաղաքացիական ծառայողների աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են սույն օրենքով, հանրային ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

2. Քաղաքացիական ծառայողների աշխատանքային այն հարաբերությունները, որոնք կարգավորված չեն սույն օրենքով եւ (կամ) հանրային ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, կարգավորվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ:

3. Քաղաքացիական ծառայողների միջև ծառայողական փոխհարաբերությունները կարգավորվում են աշխատանքային ներքին կարգապահական կանոններով:

28. Քաղաքացիական ծառայողի աշխատանքային (ծառայության) ժամերը

1. Աշխատանքային (ծառայության) ժամերն այն ժամանակահատվածն է, որի ընթացքում, օրենքի կամ այլ նորմատիվ իրավական ակտի համաձայն, քաղաքացիական ծառայողը պարտավոր է կատարել իր ծառայողական պարտականությունները, ինչպես նաեւ այլ ժամանակահատվածներ են, որոնք, օրենքների եւ այլ նորմատիվ իրավական ակտերի համաձայն, ներառվում են աշխատանքային օրենսդրության:

2. Քաղաքացիական ծառայողի աշխատանքային ժամերը կարող են փոխվել՝ պայմանավորված տվյալ մարմնում աշխատանքների կազմակերպման առանձնահատկություններով:

3. Գործադիր իշխանության մարմիններում աշխատանքային ժամերը սահմանում է Կառավարությունը՝ հաշվի առնելով համապատասխան մարմնում աշխատանքների կազմակերպման առանձնահատկությունները:

29. Քաղաքացիական ծառայողի ծառայողական գործուղումը

1. Քաղաքացիական ծառայողի ծառայողական գործուղում է համարվում պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի՝ համապատասխան իրավական ակտի հիման վրա քաղաքացիական ծառայողի մշտական ծառայողական վարից որոշակի ժամկետով այլ վայր մեկնելը՝ ծառայողական որոշակի պարտականություններ կատարելու համար:

2. Գլխավոր քարտուղարի ծառայողական գործուղման որոշում կայացնում է համապատասխան մարմնի ղեկավարը:

3. Քաղաքացիական ծառայողի ծառայողական գործուղման պայմաններն ու կարգը սահմանում է Կառավարությունը:

30. Քաղաքացիական ծառայողի արձակուրդը

1. Քաղաքացիական ծառայողն ունի ամենամյա նվազագույն եւ ամենամյա լրացուցիչ արձակուրդի իրավունք:

2. Քաղաքացիական ծառայողի ամենամյա արձակուրդի տևողությունը 20 աշխատանքային օր է, իսկ լրացուցիչ արձակուրդի տևողությունը՝ չորս աշխատանքային օր:

3. Քաղաքացիական ծառայողին հերթական եւ (կամ) լրացուցիչ արձակուրդը տրամադրվում է այնպես, որ չխոչընդոտի տվյալ կառուցվածքային ստորաբաժանման բնականոն գործունեությանը:

4. Առանձին դեպքերում, անձնական կամ ընտանեկան հանգամանքներից ելնելով, քաղաքացիական ծառայողին կարող է մեկ տարվա ընթացքում տրամադրվել չվճարվող արձակուրդ՝ ոչ ավելի, քան երեսուց օր:

5. Քաղաքացիական ծառայողին արձակուրդ տրամադրելու կարգը եւ պայմանները սահմանում է Կառավարությունը:

6. Քաղաքացիական ծառայողների արձակուրդ տրամադրում է գլխավոր քարտուղարը, իսկ գլխավոր քարտուղարին՝ համապատասխան մարմնի ղեկավարը:

31. Քաղաքացիական ծառայության ստաժը

1. Քաղաքացիական ծառայության ստաժը ներառում է քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու, քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվում գրանցված լինելու, համապատասխան մարմիններում մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելն աշխատած ողջ ժամանակահատվածը:

2. Քաղաքացիական ծառայության ստաժը չի ներառում սույն օրենքով սահմանված կարգի խախտմամբ՝ քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու, քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվում գրանցված լինելու, ինչպես նաեւ օրենքի խախտմամբ համապատասխան մարմիններում մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելն աշխատած ժամանակահատվածը:

3. Քաղաքացիական ծառայության ստաժը հաշվարկվում է քաղաքացիական ծառայողի ընդհանուր աշխատանքային ստաժում:

4. Սույն օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով նախատեսված հիմքով՝ քաղաքացիական ծառայության պաշտոնից ազատված անձի պետական պաշտոն զբաղեցնելու ժամանակահատվածի աշխատանքային ստաժը հավասարեցվում է քաղաքացիական ծառայության ստաժին:

5. Համապատասխան մարմիններում փորձակ գրանցված ժամանակաշրջանը սույն օրենքի իմաստով հաշվարկվում է որպես հանրային ծառայության ստաժ՝ քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու համար: Փորձակ գրանցված ժամանակահատվածում աշխատանքների մասնակցության համար փորձնակը չի վարձատրվում:

6. Փորձակ գրանցելու եւ աշխատանքների մասնակցության առանձնահատկությունները սահմանում է համակարգող փոխվարչապետը:

32. Քաղաքացիական ծառայողի կողմից ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ եւ զենք գործադրելը եւ համազգեստը

1. Համապատասխան մարմինների առջև դրված խնդիրների առանձնահատկություններով պայմանավորված՝ քաղաքացիական ծառայողը կարող է կրել համազգեստ եւ (կամ) զենք, ինչպես նաեւ կարող է գործադրել ֆիզիկական ուժ եւ հատուկ միջոցներ:

2. Քաղաքացիական ծառայողի կողմից ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների եւ զենքի գործադրման, զենք տրամադրելու, զենքը պահելու, կրելու, օգտագործելու կարգը, պայմանները, համազգեստների նկարագրերը եւ այլ մարմինների ցանկը սահմանում է Կառավարությունը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

Գ Լ ՈՒ Ն 7

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒՐ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՑ ԵՎ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՆԵՐՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉԸ

33. Քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողովը

1. Քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողովի կազմում ընդգրկվելու համար համապատասխան մարմինների գլխավոր քարտուղարները քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակում լրացնում են համակարգող փոխվարչապետի սահմանած պահանջները բավարարող երկու քաղաքացիական ծառայողի թեկնածություն: Գլխավոր քարտուղարը չի կարող լինել էթիկայի հանձնաժողովի անդամ:

2. Քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողովը բաղկացած է հինգ անդամից: Ցուրաբանչյուր դեպքի համար ձևավորվում է քաղաքացիական ծառայողների էթիկայի առանձին հանձնաժողով:

3. Քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողով ձևավորելու իրավական հիմք առաջանալու պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան մարմնի բարեկարգության հարցերով կազմակերպվող էթիկայի հանձնաժողովի անդամի պատասխանության սկզբունքով ձևավորում է քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողով՝ կազմում պարտադիր ընդգրկելով տվյալ մարմնի՝ քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողովի անդամի թեկնածուներից մեկին: Էթիկայի հանձնաժողովի անդամի պատասխանության սկզբունքով պաշտոնով ավելի բարձր քաղաքացիական ծառայողին ընտրում է քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողովի նախագահ: Տվյալ մարմնի ներկայացուցիչը չի կարող լինել քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողովի նախագահ:

4. Քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողովի անդամ իր լիազորություններն իրականացնելիս ենթարկվում է միայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը եւ օրենքներին, անկախ է իրեն առաջադրած պաշտոնատար անձից:

5. Քաղաքացիական ծառայողը, որպես հանձնաժողովի անդամ է դրանից հետո, չի կարող կարգապահական պատասխանատվության ենթարկվել իր՝ որպես հանձնաժողովի անդամի կարգավիճակից բխող գործողությունների համար, բացառությամբ անհարգելի պատճառով հանձնաժողովի աշխատանքից բացակայելու դեպքերի:

34. Քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողովի գործունեությունը

1. Քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողովը աշխատանքները կազմակերպում է ծառայողական քննության կարգին համապատասխան:

2. Հանձնաժողովի նախագահը կատարում է աշխատանքների բաշխում հանձնաժողովի անդամների միջև:

3. Հանձնաժողովը ծառայողական քննության վերաբերյալ եզրակացություն ընդունում է՝ գումարելով հանձնաժողովի նիստ: Նիստն իրավազոր է, եթե դրան ներկա է քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողովի անդամները:

4. Քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողովը անհամատեղելիության պահանջների եւ այլ սահմանափակումների, ինչպես նաեւ վարքագծի ուղենիշային սկզբունքների եւ դրանցից բխող վարքագծի կանոնների վերաբերյալ մասնագիտական խորհրդատվություն է մեթոդական աջակցություն ստանալու համար կարող է դիմել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով:

5. Քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողովը հանրային ծառայողների անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, նվերներ ընդունելու արգելքի, վարքագծի կանոնների խախտումների, ինչպես նաեւ շահերի բախման իրավիճակների կանխարգելմանն ու վերացմանն ուղղված առաջարկություններ է ներկայացնում համապատասխան մարմնին կամ պաշտոնատար անձին:

35. Պատասխանատվության առանձնահատկությունները քաղաքացիական ծառայողի վարքագծի կանոնները խախտելու, հանրային ծառայողի նկատմամբ կիրառվող այլ սահմանափակումները չպահպանելու, շահերի բախման կանոնները, նվերներ ընդունելու արգելքը խախտելու դեպքերում

1. Քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողովը ծառայողական քննության արդյունքով ընդունած եզրակացությունն անմիջապես ուղարկում է ծառայողական քննության կողմերին:

2. Քաղաքացիական ծառայողն անհամատեղելիության պահանջների եւ այլ սահմանափակումների խախտումների վերաբերյալ քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողովի եզրակացությունը կարող է բողոքարկել այն ստանալու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված ժամկետում բողոք ներկայացնելը հիմնավորող փաստաթղթի բացակայության դեպքում, իսկ վարքագծի կանոնները խախտելու եւ (կամ) շահերի բախման կանոնները եւ (կամ) նվերներ ընդունելու արգելքը խախտելու վերաբերյալ քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողովի եզրակացությունն ստանալուց հետո, իսկ բողոքարկման դեպքում՝ համապատասխան եզրակացությունն ստանալուց հետո՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, գլխավոր քարտուղարը եզրակացությունը հրապարակում է այդ մարմնի պաշտոնական կայքէջում:

4. Պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը եզրակացության հրապարակումից հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, քննարկում է եզրակացությունը եւ արդյունքների մասին տեղեկատվությունը հրապարակում այդ մարմնի պաշտոնական կայքէջում:

Հոդված 36. Բարեվարքության հարցերով կազմակերպիչը՝

1. Համապատասխան մարմինների անձնակազմի կառավարման ստորաբաժանումում՝ նախատեսվում է բարեվարքության հարցերով կազմակերպչի քաղաքացիական ծառայության պաշտոն:

2. Բարեվարքության հարցերով կազմակերպիչը՝

1) քաղաքացիական ծառայողների տրամադրում է անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, նվերներ ընդունելու արգելքի, վարքագծի կանոնների վերաբերյալ մասնագիտական խորհրդատվություն, ներկայացնում շահերի բախման իրավիճակի լուծմանն ուղղված քայլեր ձեռնարկելու վերաբերյալ առաջարկություն:

2) իրականացնում է բարեվարքության հարցերով վերապատրաստման կարիքների բացահայտում եւ վերապատրաստման ծրագրերի, ինչպես նաեւ բարեվարքության պահանջների պահպանմանն ուղղված այլ ծրագրերի մշակում:

3) համապատասխան մարմնի գլխավոր քարտուղարի, էթիկայի հանձնաժողովի պահանջով կամ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի առաջարկով կատարում է բարեվարքության համակարգին առնչվող ուսուցանարկություններ:

4) մշակում է քաղաքացիական ծառայողների բարեվարքության պլանների նախագծերը, դրանք ներկայացնում գլխավոր քարտուղարի հաստատմանը:

5) վարում է քաղաքացիական ծառայողների կողմից անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների եւ շահերի բախման, նվերների ընդունման արգելքի խախտման դեպքերի վիճակագրություն:

ԳԼՈՒԽ 8

ՇԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԴԱՐԱՐՈՒՄԸ, ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՇԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՆԵԼԸ, ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱՐԱՐՆԵՑՆԵԼԸ

Հոդված 37. Քաղաքացիական ծառայողին պաշտոնից ազատելու եւ ծառայության դադարման հիմքերը՝

1. Քաղաքացիական ծառայողին պաշտոնից ազատելու հիմքերն են՝

1) անձնական դիմումը:

2) հաստիքների եւ (կամ) սույն օրենքի 23-րդ հոդվածով սահմանված դեպքում քաղաքացիական ծառայության պաշտոնի կրճատումը:

3) սույն օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված դեպքերում քաղաքացիական ծառայության պաշտոնի չնշանակվելը:

4) քաղաքացիական ծառայության պաշտոնից ազատելու կամ ծառայությունը դադարեցնելու որոշումն անվավեր ճանաչելը եւ անձին քաղաքացիական ծառայության իր պաշտոնում վերականգնելը:

5) համապատասխան մարմնի գործունեության դադարումը:

6) սույն օրենքի 23-րդ հոդվածի 9-րդ մասով սահմանված դեպքում քաղաքացիական ծառայության պաշտոնի նշանակվելու համաձայնություն չտալը:

7) հանրային պաշտոնում ընտրվելը կամ նշանակվելը:

8) Քաղաքացիական ծառայողի լիազորությունները դադարում են՝

1) նրա մահվան դեպքում:

2) սույն օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված կարգապահական տույժը մեկ տարվա ընթացքում կրկին կիրառելու դեպքում:

3) սույն օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «ա» եւ «բ» ենթակետերով նախատեսված կարգապահական տույժերը մեկ տարվա ընթացքում կիրառելու դեպքում:

4) սույն օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «գ» ենթակետով նախատեսված կարգապահական տույժը կիրառելու դեպքում:

5) ժամանակավոր անաշխատունակության հետեւանքով մեկ տարվա ընթացքում ավելի քան չորս ամիս անընդմեջ կամ վերջին տասներկու ամսվա ընթացքում ավելի քան 140 օր աշխատանքի չներկայանալու դեպքում՝ չհաշված հղիության եւ ծննդաբերության արձակուրդը:

6) սույն օրենքով սահմանված փորձաշրջանը չանցնելու դեպքում:

7) քաղաքացիական ծառայության պաշտոնի նշանակելու՝ սույն օրենքով սահմանված կարգի խախտումը՝ քաղաքացիական ծառայության գրասենյակի միջնորդությամբ:

8) «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջները չպահպանելու դեպքերում՝ համապատասխան եզրակացության հիման վրա:

9) Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու դեպքում:

10) ուժի մեջ մտած՝ նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճռի դեպքում, բացառությամբ այն դեպքերի, երբ նշանակվել է տուգանք: Անձի կողմից տուգանքի վճարման ժամանակացույցով սահմանված պարտավորությունների կատարումը խախտելու դեպքում տուգանքը կամ տուգանքի չվճարված մասը հանրային աշխատանքներով փոխարինվելու դեպքում ծառայությունը դադարեցվում է:

11) քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու՝ սույն օրենքով սահմանված առավելագույն տարիքը լրանալու դեպքում:

12) դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ կամ անհայտ բացակայող ճանաչվելու դեպքում:

13) դատական կարգով քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունքից զրկվելու դեպքում:

14) Կառավարության հաստատած հիվանդություններից որեւէ մեկով հիվանդանալու դեպքում:

15) կադրերի ռեզերվից հանվելու դեպքում, բացառությամբ այն դեպքերի, երբ քաղաքացիական ծառայողը զբաղեցնում է հանրային պաշտոն կամ հանրային ծառայության պաշտոն:

16) երկու տարի անընդմեջ իր մեղքով վերապատրաստման անհատական ծրագրով հաստատված կրեդիտները չտանալու դեպքում:

17) անձնական դիմումի համաձայն:

3. Երկու տարի անընդմեջ կատարողականի տարեկան գնահատման արդյունքները Կառավարության սահմանած տոկոսից (միավորից) ցածր լինելու դեպքում պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձն իրավունք ունի դադարեցնելու քաղաքացիական ծառայողի լիազորությունները:

4. Քաղաքացիական ծառայողի ծառայությունը չի կարող դադարեցվել սույն հոդվածի 2-րդ մասի 17-րդ կետով, եթե առկա է 1-16-րդ կետերով նախատեսված հիմքերից որեւէ մեկը:

5. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով եւ սույն հոդվածի 2-րդ մասի 17-րդ կետով նախատեսված հիմքերով քաղաքացիական ծառայողն ազատվում է զբաղեցրած պաշտոնից, կամ դադարեցվում է ծառայությունը դիմում ներկայացնելուց հետո՝ երրորդ աշխատանքային օրը, եթե այդ դիմումում ավելի ուշ ժամկետ նախատեսված չէ: Մինչեւ համապատասխան իրավական ակտի ընդունումը քաղաքացիական ծառայողը կարող է հետ վերցնել ներկայացրած դիմումը:

6. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված հիմքերի (բացառությամբ 17-րդ կետով նախատեսված հիմքի) ի հայտ գալու դեպքում պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը երկու աշխատանքային օրվա ընթացքում ընդունում է քաղաքացիական ծառայողի լիազորությունները դադարելու մասին համապատասխան իրավական ակտ:

7. Սույն հոդվածի 1-ին մասի 2-4-րդ կետերով նախատեսված հիմքերով քաղաքացիական ծառայության պաշտոնից ազատելու դեպքում քաղաքացիական ծառայողներին այդ մասին նախազգուշացնելը պարտադիր չէ:

8. Սույն հոդվածի 2-րդ մասի 2-4-րդ կետերով նախատեսված հիմքերից որևէ մեկով ծառայությունը դադարեցրած անձը մինչև մեկ տարին լրանել կարող մասնակցի քաղաքացիական ծառայության տվյալ պաշտոնի մրցույթին:

9. Մինչև քաղաքացիական ծառայության զբաղեցրած պաշտոնից ազատելու մասին կամ լիազորությունները դադարելու մասին իրավական ակտն ընդունելը համապատասխան մարմինը քաղաքացիական ծառայողից պահանջում է նրա գործավարությանը հանձնված նյութերը եւ օգտագործմանը տրամադրված գույքը: Քաղաքացիական ծառայողը պարտավոր է անհապաղ կատարել այդ պահանջը:

ԳԼՈՒԽ 9

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԴԵԿԱՎԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ

Հոդված 38. Քաղաքացիական ծառայության կազմակերպումը եւ ղեկավարումը

1. Քաղաքացիական ծառայության ղեկավարումը, միասնականությունը սույն օրենքով եւ այլ իրավական ակտերով սահմանված կարգով ապահովում է վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակը:

2. Քաղաքացիական ծառայության գրասենյակը հաշվետու է վարչապետին, Կառավարությանը եւ համակարգող փոխվարչապետին:

3. Քաղաքացիական ծառայության գրասենյակը՝

1) իրականացնում է համապատասխան մարմինների մարդկային ռեսուրսների կառավարման մեթոդական ղեկավարումը եւ վերահսկողությունը:

2) ուսուճասիրում է վերլուծում է համապատասխան մարմիններում հանրային ծառայության օրենսդրության կիրառման պրակտիկան, մշակում եւ Կառավարության, վարչապետի եւ համակարգող փոխվարչապետի քննարկմանն է ներկայացնում հանրային ծառայության առնչվող համապատասխան իրավական ակտերի նախագծերը:

3) իրականացնում է վերլուծություններ՝ բացահայտելու հոսունության դինամիկան, դրան նպաստող պայմանները, հայտարարված մրցույթներին դիմորդներ չլինելու պատճառները, այդ թվում՝ պաշտոնների սխալ գնահատումը, չափանիշների սահմանումը, ենթախմբերի դասակարգումը:

4) մշակում է պետական մարմիններում աշխատանքի վարձատրության քաղաքականությունը:

5) Կառավարության սահմանված կարգով իրականացնում է աշխատանքի շուկայի վերլուծություն՝ ըստ մասնագիտությունների եւ տարածքների:

6) իրականացնում է կատարողականի գնահատման արդյունքների մոնիտորինգ եւ կատարում համապատասխան վերլուծություններ:

7) իրականացնում է վերապատրաստման արդյունքների ուսուճասիրություն եւ վերլուծություն:

8) Կառավարություն առաջարկություններ է ներկայացնում համապատասխան մարմինների վերակազմակերպման, գործունեության դադարման, կառուցվածքային փոփոխությունների ժամանակ քաղաքացիական ծառայության հետ կապված հարցերի վերաբերյալ:

9) ուսուճասիրություններ եւ վերլուծություններ արդյունքների վերաբերյալ առաջարկություններ է ներկայացնում համապատասխան մարմիններ:

10) համապատասխան եւ այլ մարմիններից ստանում է քաղաքացիական ծառայության հետ կապված անհրաժեշտ տեղեկատվություն:

11) անձնակազմի կառավարման աշխատանքների կազմակերպման մասով տալիս է մեթոդական ցուցումներ:

12) իրականացնում է սույն օրենքով, այլ օրենքներով, դրանցից բխող իրավական ակտերով նախատեսված այլ լիազորություններ:

4. Քաղաքացիական ծառայության գրասենյակը, օրենքով սահմանված դեպքերում քաղաքացիական ծառայության որոշ ինստիտուտների, գործառույթների, ընթացակարգերի հետ կապված կարող է փորձարարական աշխատանքներ կազմակերպել համապատասխան մարմիններում:

Հոդված 39. Գլխավոր քարտուղարը

1. Գլխավոր քարտուղարը քաղաքացիական ծառայող է:

2. Համապատասխան մարմիններում մարդկային ռեսուրսների կառավարման, հանրային ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների պահպանման պատասխանատու գլխավոր քարտուղարն է:

3. Գլխավոր քարտուղարի լիազորությունները սահմանվում են սույն օրենքով, «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, այլ օրենքներով եւ իրավական ակտերով:

4. Սույն օրենքով սահմանված գլխավոր քարտուղարի լիազորություններն իրականացնում են օրենքով նախատեսված դեպքերում քաղաքացիական ծառայող համարվող աշխատակազմի ղեկավարը, դատական դեպարտամենտի ղեկավարը, վարչական պաշտոն զբաղեցնող աշխատակազմի ղեկավարը:

5. Անվտանգության խորհրդի գրասենյակում սույն օրենքով սահմանված՝ գլխավոր քարտուղարի լիազորություններն իրականացնում է Անվտանգության խորհրդի քարտուղարը, իսկ մարմնի ղեկավարին վերապահված լիազորությունները՝ վարչապետը:

6. Այն տեսչական մարմնում, որի քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված չէ գլխավոր քարտուղարի պաշտոն, սույն օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ եւ 5-րդ մասերով, 10-րդ հոդվածի 5-րդ եւ 11-րդ մասերով, 16-րդ հոդվածի 4-րդ մասով, 19-րդ հոդվածի 3-րդ եւ 7-9-րդ մասերով, 22-րդ հոդվածի 3-րդ մասով, 30-րդ հոդվածի 6-րդ մասով, 33-րդ հոդվածի 1-ին մասով եւ 35-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված լիազորություններն իրականացնում է տեսչական մարմնի ղեկավարը: Տեսչական մարմնի օրենքով նախատեսված ստորաբաժանման ղեկավարին պաշտոնի նշանակում եւ պաշտոնից ազատում է վարչապետի աշխատակազմի ղեկավարը:

ԳԼՈՒԽ 10

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԴԵՊՔԵՐՈՒՄ

Հոդված 40. Քաղաքացիական ծառայության կազմակերպման որոշ առանձնահատկություններ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով եւ դեպքերում աշխատանքների փորձարարական կազմակերպման համար նախատեսված քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը կարող են ներառել աշխատանքային ստաժի եւ փորձի, կրթության, ենթակա եւ հաշվետու լինելու՝ սույն օրենքով սահմանված պահանջներից եւ չափանիշներից տարբերվող այլ չափանիշներ եւ պահանջներ:

2. Այդ չափանիշները եւ պահանջները սահմանվում են աշխատանքների փորձարարական կազմակերպման ծրագրում եւ սույն օրենքով սահմանված կարգով ներառվում են քաղաքացիական ծառայության այդ պաշտոնների անձնագրերում:

3. Աշխատանքների փորձարարական կազմակերպման համար նախատեսված քաղաքացիական ծառայության պաշտոններն զբաղեցնում են միայն սույն օրենքով նախատեսված մրցույթային կարգով:

ԳԼՈՒԽ 11

ԵԶՐԱԿԱՅԻՆ ՄԱՍ ԵՎ ԱՆՅՈՒՄԱՑԻՆ ԴՐՈՒՑԹՆԵՐ

Հոդված 41. Օրենքի ուժի մեջ մտնելը

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հուլիսի 1-ից, բացառությամբ սույն օրենքի 33-36-րդ, 38-րդ, 42-րդ եւ 49-րդ հոդվածների: Սույն օրենքի 33-36-րդ հոդվածներն ուժի մեջ են մտնում 2019 թվականի հունվարի 1-ից, իսկ 38-րդ, 42-րդ եւ 49-րդ հոդվածներն ուժի մեջ են մտնում նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ուժը կորցրած ճանաչել «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի դեկտեմբերի 4-ի ՀՕ-272 օրենքը, բացառությամբ 9-րդ եւ 10-րդ հոդվածների:

3. «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի դեկտեմբերի 4-ի ՀՕ-272 օրենքի 9-րդ եւ 10-րդ հոդվածներն ուժը կորցրած են ճանաչվում սույն օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված կարգն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող 60-րդ օրը:

4. 2019 թվականի հունվարի 1-ից ուժը կորցրած ճանաչել «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի դեպարտամենտում պետական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2014 թվականի մայիսի 19-ի ՀՕ-26-Ն օրենքը, «Քաղաքացիական հատուկ ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2007 նոյեմբերի 28-ի ՀՕ-286-Ն օրենքը:

Հոդված 42. Քաղաքացիական ծառայության գրասենյակի կազմավորումը

1. Քաղաքացիական ծառայության գրասենյակի քաղաքացիական ծառայության պաշտոնները մինչև տույն օրենքով սահմանված մրցութային կարգով զբաղեցնելու գրադեցվում են ժամկետային աշխատանքային պայմանագրով այլ անձանց կողմից:

Հոդված 43. Քաղաքացիական ծառայության խորհրդի աշխատակազմի գործունեության դադարեցումը

1. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի նախագահը տասնհինգօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի աշխատակազմի տիրապետման եւ օգտագործման իրավունքով հանձնված գույքը, ինչպես նաև միջազգային ծրագրերի իրականացման արդյունքով ստացված գույքը, քաղաքացիական ծառայության ինստիտուտների բարեփոխման համար միջազգային դոնոր կազմակերպությունների եւ (կամ) սեփական միջոցներով իրականացված ուսումնասիրությունների, վերլուծությունների, կազմված ծրագրերի արդյունքները հանձնում է վարչապետի աշխատակազմ, իսկ արխիվային փաստաթղթերը՝ Ազգային արխիվ:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված գործողության իրականացումից հետո քաղաքացիական ծառայության աշխատակազմի քաղաքացիական ծառայողները վեց ամիս ժամկետով գրանցվում են քաղաքացիական ծառայության կադրերի ռեգերվում:

3. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված գործողության իրականացումից հետո դադարում է քաղաքացիական ծառայության խորհրդի գործունեությունը:

Հոդված 44. Սույն օրենքից բխող իրավական ակտերն ընդունելը

1. Քաղաքացիական ծառայության գրասենյակի կազմավորումից հետո՝ մեկամսյա ժամկետում, վարչապետի հաստատման է ներկայացվում ժամանակացույց եւ միջնաուժեղ ծրագիր՝ սույն օրենքի գործողության ոլորտը սահմանված մարմինների վրա տարածելու համար:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, ընդունել սույն օրենքի կատարումն ապահովող Կառավարության որոշումները:

3. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ երկու ամսվա ընթացքում, ընդունել սույն օրենքի կատարումն ապահովող փոխվարչապետի որոշումները:

4. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը, սույն օրենքին համապատասխանեցնել պետական ծառայության մյուս օրենքները՝ հիմք ընդունելով սույն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասը, սահմանված առանձնահատկություններ են սահմանվում զինվորական ծառայություն անցնող պետական ծառայողների պաշտոնների, ոստիկանության գործառնություններ իրականացնող ոստիկանության ծառայողների, պաշտոնների, փրկարարական ծառայության պաշտոնների, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում պետական ծառայության պաշտոնների, քրեակատարողական ծառայության բարձրագույն խմբի պաշտոնների եւ քրեակատարողական ծառայության հատուկ նշանակության ստորաբաժանման պաշտոնների, հարկադիր կատարողների պաշտոնների, դիվանագիտական ծառայության պաշտոնների, հարկային մարմնում նետաքննչական, օպերատիվ-հետախուզական գործառնություններ իրականացնող պաշտոնների, մաքսային մարմիններում իրավապահ գործառնություններ իրականացնող պաշտոնների, նախաքննչության հսկողություն, ներքին անվտանգության ապահովման գործառնություններ իրականացնող պաշտոնների, ինչպես նաև մաքսատան եւ մաքսակետի պաշտոնների, դատական ծառայողների՝ դատավորի օգնականի, դատավորի գործակառի եւ դատական նիստերի քարտուղարի պաշտոնների, դատական կարգադրիչների ծառայության պաշտոնների համար:

5. Պետական ծառայողները համարվում են քաղաքացիական ծառայողներ: Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամանակացույցին համապատասխան՝ առանց մրցույթի նշանակվում են քաղաքացիական ծառայության համապատասխան պաշտոններում:

Հոդված 45. Գործառնությունների իրականացման առանձնահատկությունները մինչև տույն օրենքով նախատեսված էլեկտրոնային ծրագրերը կազմելը

1. Մինչև տույն օրենքով նախատեսված էլեկտրոնային ծրագրերի կազմումը քաղաքացիական ծառայության գրասենյակը այդ գործընթացները կազմակերպում եւ գործառնություններ իրականացնում է ոչ էլեկտրոնային եղանակով՝ համակարգող փոխվարչապետի սահմանած կարգին համապատասխան:

2. Պաշտոնների դասակարգման եւ չափանիշների սահմանման սույն օրենքով սահմանված պահանջները համապատասխան մարմինների վրա տարածվում են համակարգող փոխվարչապետի սահմանած ժամանակացույցին համապատասխան: Մինչև նոր չափանիշներով պաշտոնների գնահատումներն իրականացնելը եւ չափանիշներ սահմանելը գործում են մինչև տույն օրենքն ուժի մեջ մտնելը հաստատված պաշտոնների անձնագրերը:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված ժամանակացույցին համապատասխան՝ պաշտոնների դասակարգման նոր համակարգին անցնելու դեպքում քաղաքացիական ծառայողները վերանշանակվում են իրենց պաշտոններում առանց մրցույթի եւ ժամկետային պայմանագրի:

Հոդված 46. Էթիկայի հանձնաժողովի ձևավորումը եւ բարեկարգության հարցերով կազմակերպիչների նշանակումը

1. Մինչև տույն օրենքով նախատեսված էթիկայի հանձնաժողովի ձևավորումը՝ քաղաքացիական ծառայության գրասենյակը եւ (կամ) Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը Էթիկայի հանձնաժողովի անդամների թեկնածուների համար կազմակերպում են բարեկարգության հարցերով վերապատրաստումներ:

2. Բարեկարգության հարցերով կազմակերպիչների պաշտոնների անձնագրերը հաստատվում են 2019 թվականի հունվարի երրորդ տասնօրյակում:

Հոդված 47. Իրավահաջորդության որոշ դրույթներ

1. Մինչև տույն օրենքն ուժի մեջ մտնելը կիրառված խրախուսակնի (պարգևատրման), կարգապահական տույժի միջոցները պահպանում են իրենց իրավական հետեանքները եւ հաշվի են առնվում սույն օրենքով նախատեսված կարգապահական տույժեր եւ խրախուսակնի տեսակներ կիրառելիս:

2. Մինչև տույն օրենքն ուժի մեջ մտնելը տրամադրված արձակուրդները պահպանում են իրենց իրավական հետեանքները: Նախկինում չօգտագործված եւ տեղափոխված արձակուրդները պահպանվում են եւ տրամադրվում են մինչև տույն օրենքն ուժի մեջ մտնելը գործող կարգին համապատասխան:

3. Մինչև տույն օրենքն ուժի մեջ մտնելը իրապարակված մրցույթներն անցկացվում են մրցույթի իրապարակման ժամանակ գործող կարգին համապատասխան:

4. Պետական ծառայության պաշտոններում օրենքով սահմանված կարգով փոխարինող եւ (կամ) պայմանագրով պաշտոն զբաղեցնող եւ (կամ) ժամանակավոր թափուր պաշտոն զբաղեցնող անձինք շարունակում են իրենց պարտականությունների կատարումը մինչև տվյալ պաշտոնների համար սահմանված հիմքերի վերացումը, եթե սույն օրենքով այլ բան նախատեսված չէ:

5. Վերապատրաստման, ատեսավորման (կատարողականի գնահատման) հարաբերությունների իրավական հետեանքները, ինչպես նաև արդեն իսկ նախատեսված եւ իրականացվող գործողությունները պահպանում են իրենց իրավական ուժը:

6. Ստացած դատային աստիճանները, կոչումները պահպանվում են:

7. Կրտսեր պաշտոններ զբաղեցնելու համար գործող հավաստագիր ունեցող անձինք ընդգրկվում են վարկանիշային ցուցակներում՝ սույն օրենքով սահմանված կարգին համապատասխան:

8. Սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո այն մարմիններում, որոնց վրա սույն օրենքի գործողությունը տարածվելու է համաձայն սույն օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամանակացույցի, պետական ծառայողական հարաբերությունները կարգավորվում են մինչև տույն օրենքն ուժի մեջ մտնելը գործող կարգին համապատասխան:

9. Մինչև տույն օրենքն ուժի մեջ մտնելը ժամանակավոր անաշխատունակության հետեանքով մեկ տարվա ընթացքում ավելի քան վեց ամիս աշխատանքի չներկայանալու ժամկետները (չհաշված հիդիության եւ ծննդաբերության արձակուրդի) հաշվարկվում են նաև սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո, եւ իրավական հետեանքներն առաջանում են սույն օրենքով սահմանված ժամկետները լրանալու դեպքերում:

10. Մինչև տույն օրենքն ուժի մեջ մտնելը նախատեսված վերապատրաստումները կազմակերպվում եւ անցկացվում են մինչև տույն օրենքն ուժի մեջ մտնելը գործող կարգին համապատասխան:

11. Պաշտոնների դասակարգման նոր համակարգին անցնելը ծառայությունը դադարեցնելու հիմք չէ: Քաղաքացիական ծառայողը վերանշանակվում է նոր պաշտոնին: Նոր պաշտոնի նշանակվելը չի հանգեցնում քաղաքացիական ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ժամկետների վերահաշվարկի:

12. Պաշտոնների դասակարգման նոր համակարգին անցնելիս քաղաքացիական ծառայողը պահպանում է իր աշխատավարձը, եթե նոր դասակարգմամբ լինի պաշտոնի ենթախմբի (սանդղակի մակարդակի) իջեցում:

13. Մինչև տույն օրենքն ուժի մեջ մտնելը դատային աստիճանի համար հաշվարկվող հավելավճարը տրվում է տվյալ պաշտոնն զբաղեցնելու ժամանակահատվածում: Պաշտոնի փոփոխության դեպքում հավելավճարը չի հաշվարկվում:

14. Մինչև տույն օրենքն ուժի մեջ մտնելը քաղաքացիական ծառայության կադրերի կարճաժամկետ ռեգերվում գրանցված քաղաքացիական ծառայողները համարվում են քաղաքացիական ծառայության գրասենյակի կողմից վարվող կադրերի ռեգերվում գրանցված եւ ստանում են սահմանված վարձատրությունը մինչև տույն օրենքն ուժի մեջ մտնելը սահմանված ժամկետով:

15. «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի դեկտեմբերի 4-ի ՀՕ-272 օրենքի ուժը կորցնելը հիմք չէ քաղաքացիական ծառայության պաշտոններից ազատելու համար, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

16. Սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո պետական ծառայողին սույն օրենքով սահմանված կարգով քաղաքացիական ծառայության պաշտոնի նշանակելու դեպքում համապատասխան ծառայողի համար վերջին պաշտոնում սահմանված պաշտոնային դրույթաչափը «Պետական պաշտոններ եւ պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով պահպանվում է:

17. Սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո քաղաքացիական (պետական) ծառայողին սույն օրենքով սահմանված կարգով քաղաքացիական ծառայության պաշտոնի նշանակելու դեպքում, որը պայմանավորված է պաշտոնների դասակարգման նոր համակարգին անցնելով, համապատասխան ծառայողի համար վերջին պաշտոնում սահմանված պաշտոնային դրույթաչափը «Պետական պաշտոններ եւ պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով պահպանվում է:

16. Եթե պետական ծառայողի նշանակումը պայմանավորված չէ սույն հոդվածի 16-17-րդ մասերով նախատեսված պայմաններով, ապա նրա համար պաշտոնային դրույթային որոշվում է «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ընդհանուր կարգով:

19. «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով քաղաքացիական հատուկ ծառայողների համար սահմանված հավասարեցումը տարածվում է այդ մարմինների քաղաքացիական ծառայողների վրա:

20. «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով զինծառայողների համար սահմանված արտոնությունները գործում են քաղաքացիական ծառայող դառնալուց հետո այն կարգավորումներով, ինչ նախատեսված է քաղաքացիական հատուկ ծառայողների համար:

21. Քաղաքացիական ծառայության ստաժում չեն ներառվում համապատասխան մարմիններում քաղաքացիական աշխատանքը եւ տեխնիկական սպասարկում իրականացնելու ժամանակահատվածները:

22. Քաղաքացիական ծառայության խորհրդի մասնակցությամբ դատական գործերում սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո դատական ներկայացուցչության հարցերը սահմանում է Կառավարությունը՝ սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում:

Հոդված 48. Գլխավոր քարտուղարի պաշտոն սահմանելը

1. Հայաստանի Հանրապետության ոստիկանությունում մինչև սույն օրենքով սահմանված գլխավոր քարտուղարի պաշտոն նախատեսելը, սույն օրենքով գլխավոր քարտուղարի համար սահմանված լիազորություններն իրականացնում է Հայաստանի Հանրապետության ոստիկանապետը:

Հոդված 49. Կառավարության և Հանրապետության նախագահի աշխատակազմերի քաղաքացիական ծառայողների իրավական վիճակի որոշ առանձնահատկություններ

1. Վարչապետի աշխատակազմի ստեղծման մասին վարչապետի որոշումն ուժի մեջ մտնելու պահից Կառավարության աշխատակազմը լուծարվում է: Կառավարության աշխատակազմի քաղաքացիական ծառայողները շարունակում են պաշտոնավարել՝ ստանալով մինչև լուծարումը գործող աշխատավարձը եւ ենթակա չեն գրանցման քաղաքացիական ծառայության կադրերի կարճաժամկետ ռեզերվում: Կառավարության աշխատակազմի քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկը շարունակում է ուժի մեջ մնալ առավելագույնը մինչև 2018 թվականի հուլիսի 1-ը:

2. Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատվում է «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի դեկտեմբերի 4-ի ՀՕ-272 օրենքին համապատասխան: Պաշտոնների անվանացանկի հաստատումից հետո մինչև 2018 թվականի հուլիսի 1-ը Կառավարության աշխատակազմի քաղաքացիական ծառայողներին պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձինք նշանակում են վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության պաշտոններում՝ առանց մրցույթի եւ վերջնահաշվարկի՝ սույն խմբի պաշտոններում: Չնշանակված քաղաքացիական ծառայողները մինչև հուլիսի 1-ը ստանում են աշխատավարձ, եւ այդ ժամանակահատվածը համարվում է քաղաքացիական ծառայության ստաժ: Չնշանակված քաղաքացիական ծառայողների հետ հուլիսի 1-ին կատարվում է վերջնահաշվարկ, եւ նրանք վեց ամիս ժամանակահատվածով, իրավունքի ուժով, համարվում են քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվում գրանցված եւ վեց ամիս օրենքով սահմանված չափով եւ կարգով քաղաքացիական ծառայության գրասենյակից ստանում են վարձատրություն:

3. Հանրապետության նախագահի աշխատակազմի քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատվում է «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի դեկտեմբերի 4-ի ՀՕ-272 օրենքին համապատասխան: Լոր անվանացանկի հաստատումից հետո Հանրապետության նախագահի աշխատակազմի քաղաքացիական ծառայողներին պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձինք նշանակում են Հանրապետության նախագահի աշխատակազմի քաղաքացիական ծառայության պաշտոններում՝ առանց մրցույթի եւ վերջնահաշվարկի՝ սույն ենթախմբի պաշտոններում: Մինչև 2018 թվականի ապրիլի 9-ը հաստատված անվանացանկը շարունակում է ուժի մեջ մնալ առավելագույնը մինչև 2018 թվականի հուլիսի 1-ը: Չնշանակված քաղաքացիական ծառայողները առավելագույնը մինչև հուլիսի 1-ը ստանում են աշխատավարձ, եւ այդ ժամանակահատվածը համարվում է քաղաքացիական ծառայության ստաժ: Չնշանակված քաղաքացիական ծառայողների հետ առավելագույն հուլիսի 1-ին կատարվում է վերջնահաշվարկ, եւ նրանք վեց ամիս ժամանակահատվածով, իրավունքի ուժով, համարվում են քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվում գրանցված եւ վեց ամիս օրենքով սահմանված չափով եւ կարգով քաղաքացիական ծառայության գրասենյակից ստանում են վարձատրություն:

4. Մինչև հուլիսի 1-ը Կառավարության աշխատակազմի քաղաքացիական ծառայողները կարող են առանց մրցույթի նշանակվել Հանրապետության նախագահի աշխատակազմի քաղաքացիական ծառայության նույն խմբի պաշտոններում:

5. Մինչև հուլիսի 1-ը Հանրապետության նախագահի աշխատակազմի քաղաքացիական ծառայողները կարող են առանց մրցույթի նշանակվել Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության նույն խմբի պաշտոններում:

6. Սույն հոդվածի 4-րդ եւ 5-րդ մասերով նախատեսված դեպքերում վերջնահաշվարկ չի կատարվում, եւ ստաժը չի ընդհատվում: Աշխատակազմերի փոփոխությունն աշխատավարձի եւ գործակցի հաշվարկի վրա չի ազդում, եթե նրանք զբաղեցնելու են նույն ենթախմբի պաշտոն, ինչպես նաեւ պահպանվում է հաշվի եւ առնվում նախկինում կիրառված կարգապահական տույժերը, խրախուսանքի միջոցները, կատարողականի գնահատման արդյունքները:

7. Սույն հոդվածի 4-րդ եւ 5-րդ մասերով նախատեսված դեպքերում պաշտոն զբաղեցնելու ժամանակ քաղաքացիական ծառայողն զբաղեցրած պաշտոնից ազատվում է Հանրապետության նախագահի աշխատակազմում կամ Վարչապետի աշխատակազմում պաշտոն զբաղեցնելու հիմքով՝ իր դիմումի համաձայն:

8. Սույն հոդվածով նախատեսված նույն խմբի պաշտոններում նշանակման պահանջը չի տարածվում կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի պաշտոնի նշանակման դեպքերի վրա:

9. Սույն հոդվածով նախատեսված նշանակումների դեպքում քաղաքացիական ծառայողն իր համաձայնությամբ կարող է նշանակվել ավելի ցածր պաշտոնի:

10. Սույն հոդվածով սահմանված կարգով պաշտոնի նշանակումների դեպքում քաղաքացիական ծառայողը կհամայնակային հաշվետվությունների կամ կհամայնակային կատարողականների արդյունքով ստանում է պարգևատրումներ, եթե կհամայնակային հաշվետվությունները կամ կհամայնակային կատարողականները գնահատվել են դրական: Գնահատումն իրականացվում է մինչև նոր մարմնում պաշտոն զբաղեցնելը: Լախիկն է նոր մարմնում կատարված գնահատումների արդյունքով քաղաքացիական ծառայողն ստանում է պարգևատրում այն մարմնից, որտեղ զբաղեցնում է քաղաքացիական ծառայության պաշտոն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝ Ս. ՍԱՐԳՍՅԱՆ

29.03.2018
ՀՕ-205-Ն

[Նախագծի պատմություն](#)

21.01.2020 [«Քաղաքացիական ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին](#)